

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

ԻԴԵՂԻԵՂԱԾՈՒՄ

ديجيتال

Հրատարակությունը հանդիսանում է Հ.Բ.Ը.Մ.Ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة

ՊԵՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ԶԱՏԿԱԿԱՆ ԱՅՑԸ ԵԳԻՊՏՈՍ



ՊԵՐՈՒԹԻ Հայկազեան Համալսարանի պասքեթպոլի տղոց յաղթական խումբը

ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ի ֆուտբոլի տղոց յաղթական խումբը



ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ի պասքեթպոլի աղջկանց յաղթական խումբը



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳԻՐ
Արաքսի Տեղափոխում

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ
Պերճ Թերզեան

ԳԵՂԱՐՈՒԵՏՏԱԿԱՆ
ՁԵՒԱՌՐՈՒՄ
Շահէ Լուսարարեան

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՇԱՐՈՒԾԸ
Ռիթա Եմելիճեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing House

ԹԻՒ 51 Նոր Շրջան
ԱՊՐԻԼ 2009

Ատանայի Զարդերու Հարիւրամեակ «Տ.»	1
ՀՀ Արտաքին Գործերու Նախարար Էդուարդ Նալպանտեանի Այլը Եզիպտոս	2
Չրոյց՝ Տոքթ. Վիգեն Ճիզմեճեանի Հետ Սօսի Ներետեան/ Յակոբեան	4
Հողմահալած Ծառեր Անժիկ Կանիճեան	6
Ապրիլեան Եղեռնի Նշումը Գահիրեի Մէջ	8
Գահիրեի Համալսարանի Հայագիտական Կեդրոնի Կազմակերպած Երկրորդ Միջազգային Գիտաժողովը Արփի Խաչերեան	10
Հոգւոյն Երաժշտական Ղօղանջները Անժիկ Կանիճեան	11
Այս Ժամանակաշրջանին Ինչպէ՞ս Գրել «Հայաստան» Արաբերէնով Արաքսի Տերունեան- Խաչերեան	12
Տիար Արթուր Պըլընտանեանի Հետաքրքրական Դասախօսութիւնը ՀԳՄ-ի Մէջ	13
ՀԲԸՄ Գահիրէ ՀԲԸՄ-ի «Ծիածան» Երգչախումբին Ելոյթը Տիկին Սիւզան Մուլարաքի Գլխավորած Ամբողջական Հոգատարութեան Մշակութային Կեդրոնին մէջ	14
Պտոյտ Դեպի «Ուստի Ալ Ռայան»	14
Գահիրեի ՀԲԸՄ-ի Տեղասպանութեան Նուիրուած «Դասընթացք - Աշխատանք»ը	15
Շիջեցաւ Կեանքը Սոնա Պալեանի	16
Յակոբ Փիանտարեան Կը Մեծարուի ՀԲԸՄ-ի «Պատուոյ Անդամ»-ի Տիտղոսով «Տ.»	17
ՀԲԸՄ-ի Եւ Համաշխարհային Դրամատան Գործակցութեամբ Երեւանի Նուպարաշէն Արուարձանին Մէջ Բացում Մարզական Եւ Մշակութային Կեդրոնի Մը	17
Գահիրեի ՀԲԸՄ-ի Անդամական Ընդհանուր Ժողովը	18
ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի Վարչութեան կողմէ Արձանագրուած Նոր Յաջողութիւն մը Եւս	19
Պտոյտ Դեպի Իսմաիլիա	22
Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ը կը Հիւրասիրէ «Բարի Հովի» Մանկատան Փոքրիկները Արփի Խաչերեան	22
Տիգրան Չոլխաճեանի «Կարինէ»-ն Կը Փառաւորուի «Պու՛՛՛ Տիւ Նոր»-ի Բեմին Վրայ	23
Հայկ Սարգիսեան Կը Ստանձնէ Փարիզի Սիփան-Կոմիտաս Երգչախումբին Խմբավարութիւնը	23
Ժիրայր Բաբազեան՝ Թատրոնի Սիրահարը	24
Անդամական	



ԱՏԱՆԱՅԻ ԶԱՐԴԵՐՈՒ ՎԱՐԻՒՐԱՄԵԱԿ

Օսմանեան պետութեան մէջ խորհրդարանական վարչակարգի հաստատման նախաքայլը կարելի է համարել 1876-ին հռչակուած օսմանեան սահմանադրութիւնը, որ իր հռչակումէն կարճ ժամանակ յետոյ կասեցուեցաւ եւ երկիրը աւելի քան երեսուն տարի հեծեց Կարմիր Սուլթանին՝ սուլթան Ապտէլհամիտ Բ-ի ծանր լուծին տակ:

1908 Յուլիսին տեղի ունեցած երիտթուրքական յեղաշրջումը, որ սուլթանին պարտադրեց սահմանադրութեան կիրարկումը, պահ մը մեծ յոյսեր ներշնչեց պետութեան քրիստոնեայ փոքրամասնութիւններու գաւակներուն, թէ իրենք եւս իրենց թուրք հայրենակիցներուն հաւասար եւ համագործադաքացիներ պիտի նկատուէին: Այս զարգացումը գիտովցուցած էր բոլորին, որոնք ազատութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն լոզունգներով, իրար գրկելով իրենց անսահման ուրախութիւնը կը յայտնէին:

Սակայն այս կացութիւնը երկար չտևեց եւ 1909-ին թրքական յետադիմական շարժում մը վերջ տուաւ իթթիհատական վարչաձեւին եւ վերականգնեց սուլթանէն խլուած իրաւունքները:

Այս կացութեան ստեղծած խառնաշփոթ քանի մը օրերէն օգտուելով յետադիմական թուրքերը Կիլիկիոյ մէջ 1909 Մարտ 31-ին (նոր տոմարով Ապրիլ 13-ին), կազմակերպեցին Ատանայի հայերու ջարդը, որ 30 հազար զոհ խլեց Ատանայի վիլայեթէն եւ Զալէայի վիլայեթի կարգ մը շրջաններէն, առանց հաշուելու բազմահազար որբերը, այրիները եւ անօթեւան մնացածները: Մարդկային կորուստներու կողքին, այս ջարդերը պատճառ դարձան նաեւ նիւթական հսկայ կորուստներու քանի որ ջարդարարները կը կողոպտէին եւ ապա կը հրկիզէին հայկական եկեղեցիները, դպրոցները, տուները եւ խանութները:

Մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած յետադիմական յեղաշրջումը շուտով զսպուեցաւ Սելանիկէն եկած օսմանեան զօրամասերու Իսթանպուլ ժամանումով: Օսմանեան խորհրդարանին որոշումով Կարմիր Սուլթանը գահընկեց եղաւ եւ իրեն յաջորդ նշանակուեցաւ իր կրտսեր եղբայրը Մոհամետ Ռաշատը:

Սակայն, աղէտը պատահած էր եւ բացուած հետաքննութիւնը ցոյց կուտար, թէ կարգ մը իթթիհատական պարագլուխներ եւս մատ ունէին պատահածին մէջ: Տիրող քաղաքական մթնոլորտը այնպիսին էր որ հայերը չկրցան իրենց իրաւունքները արժեցնել: Կառավարութիւնը կը փորձէր հարցը ամէն գնով փակել եւ արդարութիւն պահանջող հայոց ճիգերը հակակշռել:

Ատանայի ջարդերը եկան փաստելու թէ թուրքը երբեք պատրաստ չէր իր հայրենակից «օսմանցի» հայը իբր հաւասար իրաւունքներով քաղաքացի ընդունելու:

Նոյնպէս, այդ ջարդերը ցոյց տուին թէ իթթիհատականները ոչինչով կը տարբերէին Սուլթան Զամիտէն: Աւելին՝ անոնք ամէն միջոցի կը դիմէին պետութիւնը «օսմանացնելու» այլ խօսքով թրքացնելու եւ ան որ չէր ենթարկուեր այս քաղաքականութեան իր ձեռքով կը գրէր իր մահաժիշկը:

1909-ի Ատանայի ջարդերէն քանի մը տարի յետոյ, 1915 Ապրիլին սկսած Մեծ Եղեռնը, որ շարունակուեցաւ մինչեւ 1923, աղաղակող փաստն է այս դառն իրողութեան:

Պատմութեան հին էջերուն տեղեկանալով մեր նոր սերունդը պիտի դաս քաղէ, որպէսզի իրատեսօրէն կարենայ գնահատել մեր ժողովուրդին դիմագրաւած նոր մարտահրաւերները եւ առնէ նոր կացութիւններու թելադրած ճիշդ քայլերը:

«Տ.»



ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ ԷՊՈՒԱՐԴ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ ԱՅՅԸ ԵԳԻՊՏՈՍ

ՀՀ Արտաքին Գործերու Նախարար Էդուարդ Նալպանտեան 20-22 Փետրուար 2009-ին, երկօրեայ պաշտօնական այցելութեամբ կը գտնուէր Գահիրէ:

Պատուարժան հիւրը օդակայանին մէջ դիմաւորուեցաւ Եգիպտոսի մօտ ՀՀ Լիազօր եւ Արտակարգ Դեսպան տոքթ. Ռուբէն Կարապետեանի, դեսպանատան անձնակազմին, Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեանի, Գահիրէի Թեմական եւ Զաղաքական Ժողովներու ատենապետներ տեարք Անդրանիկ Մետրոպէանի եւ Օննիկ Պըլըքտանեանի կողմէ:

Պատուարժան Նախարարը անկախաբար Եգիպտոսի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ ունեցած իր տեսակցութիւններէն, Եգիպտահայ համայնքի անդամներուն հետ երկու հանդիպում ունեցաւ, որոնցմէ առաջինը՝ 20 Փետրուարի

երեկոյեան, հանդիպում-ընթրիք մը ՀՀ Դեսպանատան Բարեկամներու Խորհուրդին հետ, իսկ երկրորդը՝ 23 Փետրուարի երեկոյեան, ժողովուրդին հետ, Պըլըքտանեան հանդիսասրահին մէջ:

Յանուն Եգիպտահայ գաղութի Ազգային Իշխանութեան բարի գալուստի խօսքով հանդիպման բացումը կատարեց տոքթ. Սուրէն Պայրամեան: Իր ելոյթին մէջ ան անդրադարձաւ Նախարարին անցեալին Եգիպտոսի մէջ որպէս դիւանագետ ունեցած փայլուն գործունեութեան եւ ապա՝ Եգիպտոսի մօտ որպէս ՀՀ առաջին դեսպան, Եգիպտոս-Հայաստան միջպետական յարաբերութիւններու զարգացման մէջ անոր ունեցած անգնահատելի դերին:

«Բարի երթ, անկոտրում կամք եւ կանաչ ճանապարհ Ձեր առաքելութեան» մաղթանքով, խօսքը ավարտեց տոքթ. Պայրամեան եւ հրաւիրեց Նախարարը ելոյթ ունե-



ՀՀԱԳ Նախարար Էդուարդ Նալպանտեան կը դիմաւորուի ականդակական աղ ու հացով



ՀՀԱԳ Նախարարը ելոյթի պահուն



Կեդրոնը ՀՀԱԳ Նախարար Էդուարդ Նալպանտեան ձախէն աջ՝ տիար Պերճ Թերզեան, ՀՀ դեսպան, տոքթ. Ռուբէն Կարապետեան, Արհ. Տ. Գրիգոր Եպիսկոպոս Գուսան, Նախարարը, Գերշ Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեան, տիար Անդրանիկ Մետրոպեան, տիար Նորայր Տօվլէթեան եւ տիար Օննիկ Պըլլքստանեան

Նալու:

Յարգարժան նախարարը հայութիւնը յուզող ներկայ անցուդարձերուն մասին համապարփակ ելոյթ մը ունեցաւ, անդրադառնալով հայ-թրքական յարաբերութիւններուն, Արցախի հարցին, Կրաստանի հայութեան, Ջաւախքի, Մատրիտեան սկըզբունքներուն, ԵԱՀԿ Մինսքի խումբին գոր-

ըը շնորհակալական եւ բարեմաղթանքի խօսքով ելոյթ ունենալէ ետք, հրաւիրեց Գահիրէի Թեմական Ժողովի ատենապետ տիար Ա. Մետրոպեանը եգիպտահայութեան կողմէ յիշատակի նուեր մը յանձնելու յարգարժան հիւրին:

ՀՀ Արտաքին գործերու նախարարին հետ տեղի ունեցած ժողովրդային այս հան-



ՀՀԱԳ Նախարարը Գահիրէի Թեմական Ժողովի ատենապետին ձեռամբ կ'ընդունի եգիպտահայ գաղութին յիշատակի նուերը



ՀՀԱԳ Նախարարին հետ հանդիպման աւարտին ելոյթ կ'ունենայ Եգիպտոսի Հայոց Առաջնորդը

ծունելութեան եւ Անդրկովկասի տարածաշրջանին մէջ խաղաղութիւն եւ կայունութիւն պահպանելու գործընթացին:

Ելոյթէն ետք նախարարը ժողովուրդին կողմէ տրուած հարցերուն սիրով պատասխանեց: Ապա, Եգիպտոսի Հայոց Առաջնոր-

դիպումը, հպարտութեան ալիքով համակեց ներկաները, որոնք ծափահարութիւններով, ձեռքսեղմումներով ու ջերմ խօսքերով յայտնեցին իրենց զգացումները:

«Տ.»



ՉՐՈՅՑ՝ ՏՈՔԹ. ՎԻՉԵՆ ՃԻՉՄԵՃԵԱՆԻ ՐԵՏ

Կիրակի, 5 Ապրիլ 2009-ին, աշխարհի գրասարքիկութեան մայրաքաղաք Լուքսորի հեքիաթային «Լուքսոր Տաճար»*-ին մէջ տեղի ունեցած հմայիչ ներկայացումէ մը ետք, վիճակաձգութեամբ կազմուեցան 20 տարեկանէն վար ֆութպոլի համաշխարհային մրցաշարքին մասնակցող 24 երկիրներու խումբերուն վեց խմբաւորումները:

Սոյն մրցաշարքը որ տեղի կ'ունենայ երկու տարին անգամ մը տարբեր երկրի մը մէջ, այս տարի 24 Սեպտեմբերէն մինչեւ 16 Յոկտեմբեր պիտի կայանայ Եգիպտոսի մէջ:

Խմբաւորումները կազմուած են հետեւեալ ձեւով.-

Ա. Եգիպտոս, Դրինիտատ-Թուպակօ, Բարակուէյ եւ Իտալիա:

Բ. Նիճերիա, Վենեզուէլա, Սպանիա եւ Դահիդի:

Գ. Միացեալ Նահանգներ, Գերմանիա, Բամբերուն եւ Յարաւային Զորեա:

Դ. Կանա, Իզպէքիստան, Անգլիա եւ Ուրուկուէյ:

Ե. Պրագիլիա, Զոսթա Րիքա, Չեխիա եւ Աւստրալիա:

Զ. Հունգարիա, Արաբական Միացեալ Եմիրութիւններ, Յարաւային Ափրիկէ եւ Հոնտուրաս:

Այս տեսակ համաշխարհային բնոյթի մրցաշարք մը կազմակերպելը կը կարօտի մասնագիտական մօտեցումի: Հակառակ որ ան FIFA-ի հսկողութեան ենթակայ է, սակայն կը գործադրուի հիւրընկալ երկրէն կազմուած յանձնախումբի մը կողմէ: Եւ ճիշդ այս պատճառաւ է, որ մրցաշարքին ծրագրման ընդհանուր տնօրէն ընտրուած է տոքթ. Վիչեն Ճիչմեճեան որ ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի առեւտրայէտն է:

Տոքթ. Վիչենը 1994-էն ի վեր FIFA-ի World Cup Organization-ի անդամ է եւ փորձառու կազմակերպիչ համաշխարհային եւ ցամաքամասային ֆութպոլի մրցաշարքերու:

2006-ի Ափրիկէի ֆութպոլի բաժակի մրցաշարքին ժամանակ, որ տեղի ունեցաւ Եգիպտոսի մէջ, անոր բժախնդիր աշխատանքը մեծապէս սատարած է մրցաշարքին յաջողութեան: Իր վերջին ծայր կազմակերպուած աշխատելածէին շնորհիւ FIFA-ին կողմէ ան նշանակուած էր քննիչ 2007-ին Գանատայի մէջ տեղի ունեցած ֆութպոլի պատանեկան համաշխարհային մրցաշարքին: Տոքթ. Վիչեն քաջատեղեակ է հայերէնի, արաբերէնի, անգլերէնի, ֆրանսերէնի եւ

իտալերէնի:

Չրոյցի մը ընթացքին ուզեցի անելի մանրամասնութիւններ ունենալ թէ՛ մրցաշարքին եւ թէ՛ իրեն վստահուած դերին մասին:

«Իմ դերս որպէս ծրագրման ընդհանուր տնօրէն կը կայանայ մրցաշարքին ամէն մէկ մանրամասնութեան մասին որոշումներ առնելու մէջ, թելադրութիւններ ընելու ու թուղթի վրայ լուծումներ հայթայթելու մէջ: Օրինակի համար, այցելեցի տարբեր մրցադաշտեր (Stadium) ուր պիտի խաղուին մրցումները եւ տեղեկագիրներ գրեցի մրցադաշտերուն վիճակին մասին ներկայացնելով հարկ եղած նորոգումներն ու բարեփոխութիւնները» ըսաւ տոքթ. Վիչեն:

«Մրցումները պիտի խաղուին Գահիրէի, Աղէքսանդրիոյ, Պորկ-Էլ-Արապի, Բորթ - Սաիտի, Իսմաիլիայի եւ Սուէզի մրցադաշտերուն մէջ, որոնք բոլորն ալ տարբեր տեսակի ու որակի նորոգութիւններու կը կարօտին» անելցուց ան:

Ըստ տոքթ. Վիչենի ամենամեծ դժուարութիւնը մարգագետիններուն բարելաւումն է որոնք մեծա-

ծախս ինամբի կը կարօտին: Մրցադաշտի մը ձգած առաջին տպաւորութիւնը իր անթերի, լաւ ինամուած ու կանաչապատ խաղադաշտն է: Այս տեսակ համաշխարհային մրցաշարքեր, Եգիպտոսը աշխարհի առջեւ խոշորացոյցի տակ կը դնեն: Ուստի, բարձրորակ մրցադաշտեր անհրաժեշտ են լաւագոյնս ներկայացնելու Եգիպտոսը: Վերանորոգման աշխատանքները չեն կրնար սկսիլ մինչեւ որ ֆութպոլի տեղական մրցումներու եղանակը աւարտի: Ժամանակ շահելու համար, առայժմ, մրցադաշտերուն շրջակայ բաժիններուն վրայ կ'աշխատին, մինչեւ որ կարենան հանդերձասենեակները, նստարանները ու մարգագետինները նորոգել:

«Մարտի վերջէն սկսեալ, ամէն ամիս, FIFA-ն յանձնախումբ մը պիտի դրկէ քննելու համար վերանորոգման աշխատանքները, տեղեկագիրներ պիտի գրուին եւ այսպէս գործերուն պիտի հետեւին ամիս առ ամիս, մինչեւ մրցաշարքի թուականը» ըսաւ ան:

Երբ հարց տուի թէ Գահիրէի արդէն իսկ խճողուած երթուէկը ի՞նչ ձեւ պիտի առնէ մրցաշարքերուն ընթացքին, ըսաւ որ մրցումները պիտի կայանան, 5 տարբեր քաղաքներու մէջ խճողումին առաջը առնելու համար, սակայն ան-





շուշտ ամենակարեւոր մրցումները Գահիրեի մէջ տեղի պիտի ունենան, որոնց ընթացքին կ'ակնկալուի որ երթելէկի ոստիկանութիւնը շատ կարեւոր դեր ունենայ:

Այս տարողութեամբ ու մակարդակով մրցաշարք մը կազմակերպելը կը կարօտի երկրին տարբեր նախարարութիւններուն ու մարմիններուն համագործակցութեան: Հաղորդակցութեան նախարարութիւնը պետք է որ հեռախօսի ու անթել համացանցի (wireless internet) կապեր տրամադրէ մրցադաշտերուն, որպէսզի մրցումներուն հետեւող հազարաւոր լրագրողները կարենան վայրկեանը վայրկեանին աշխարհին փոխանցել արդիւնքները: Նաեւ ամէն մրցադաշտ պիտի օժտուի մամլոյ ասուլիսի սրահներով:

Զբօսաշրջիկութեան նախարարութիւնը պետք է որ մարզիկներուն, պատասխանատուներուն ու հիւրերուն երկիր մուտքի արտօնութեան հետ առընչուող հարցերը լուծէ, ինչպէս նաեւ կեցութեան եւ փոխադրութեան միջոցներ տրամադրէ:

Պաշտպանութեան նախարարութեան օժանդակութիւնը յոյժ կարեւոր է մրցադաշտերուն վերանորոգման աշխատանքներուն մէջ: Միայն այս նախարարութեան միջոցաւ է որ որեւէ տեսակի արգելք կը հարթուի եւ աշխատանքները կ'ընթանան առանց յապաղումի՝ ըստ որոշեալ ժամանակացոյցին:

Մարզական եւ երիտասարդական նախարարութեան պատասխանատուութիւնն է մարզիկներուն առօրեայ ծրագիրներուն գործադրութեան հետեւիլ:

Եւ վերջապէս հիւրընկալ քաղաքներուն ոստիկանութեան ուսերուն կ'իյնայ կարգ կանոնը պահպանելը մրցադաշտերէն ներս եւ դուրս, նաեւ երթելէկի սահուն հոսքը ապահովելը մանաւանդ՝ մրցումներէն ետք:

«Հազարի մօտ երկսեռ երիտասարդութիւն մը կամաւոր կերպով պիտի աշխատի մարզիկներուն ընկերակցելու պտոյտներու ընթացքին եւ ժողովուրդին ուղղութիւն տալու մրցադաշտերուն մէջ: Այս մեծ թիւով, գրեթէ անփորձ երիտասարդները պետք է որ նախօրօք պատրաստուած ըլլան, որպէսզի ամէն ինչ սահուն ու անթերի ընթանայ» ըսաւ տոքթ. Վիգէն:

2006-ին կայացած Ափրիկէի ֆութպոլի մրցաշարքին ժամանակ հանդիսատեսները մեծ դժուարութիւն ունեցան իրենց տեղերը գտնելու, քանի որ նստարանները թուագրուած չէին: Այս տարի բոլոր մրցադաշտերուն նստարանները պիտի թուագրուին վերջին վայրկեանին վեճերու

կամ կռիւներու առաջը առնելու համար: 2006-ի մրցաշարքին, մակնիշով ոչ մէկ T-shirt, գլխարկ կամ գաւաթ պատրաստուած էր: Այս տարի FIFA-ն պիտի ստանձնէ այս տեսակ, շատ փնտռուած ապրանքներու պատրաստութիւնն ու վաճառքը:

Տոմսերու վաճառքին ժամանակ սեւ շուկայի առիթ չտալու համար, Յուլիսէն սկսեալ FIFA-ն համացանցի միջոցաւ պիտի սկսի ծախել գաւաթ, իսկ բուն տոմսերը շրջանառութեան պիտի դրուին մրցումէն ամիս մը առաջ:

«Բարեբախտաբար իմ պատասխանատուութիւնս կ'աւարտի երբ ծրագիրները թուղթի վրայ մանրամասն կերպով ներկայացնեմ» ըսաւ տոքթ. Վիգէն, իրեն սովորական հանդարտ ու լաւատես մօտեցումով: «Անկէ ետք գործադիր տնօրէնն է որ պիտի հսկէ որ արձանագրած նախագիծերս մանրակրկիտ կերպով գործադրուին» աւելցուց ան, վիթխարի պատասխանատուութիւն մը յաջող կերպով յանձնած անձի մը գոհունակ ժպիտով:

Անշուշտ համաշխարհային պատանեկան ֆութպոլի մրցաշարքերը այնքան ժողովրդակալութիւն չեն վայելել որքան բուն համաշխարհային ֆութպոլի մրցաշարքերը, որոնք յաջորդ անգամ տեղի պիտի ունենան 2010-ին Հարաւային Ափրիկէի մէջ:

«Ճիշդ այս պատճառաւ FIFA-ն կը նախընտրէ որ մրցումները տեղի ունենան փոքր 20-30 հազար հոգիանոց մրցադաշտերու մէջ, որպէսզի պարապ նստարաններ չըլլան» ըսաւ տոքթ. Վիգէն:

Այսպէս, մրցաշարքին բացման մրցումը Եգիպտոսի եւ Դրինիտատ-Թոպակոյի միջեւ պիտի կայանայ Աղեքսանդրիոյ Պորկ-Էլ-Արապի մրցադաշտին մէջ:

Ապա՝ սկզբնական մրցումները պիտի կայանան Բորթ- Սայիտի, Իսմաիլիայի եւ Սուէզի մէջ ու հետզհետէ երբ աւարտականներուն մօտենան՝ Պորկ-Էլ-Արապի եւ Գահիրեի մրցադաշտերուն վրայ:

Օգոստոսին Եգիպտոսի բոլոր քաղաքներուն մէջ մրցաշարքը գովազդող թղթիկներ ու պաստառներ պիտի հրապարակուին: Մրցաշարքին հովանաւոր ընտրուած են ADIDAS-ը, SONY-ն, HYUNDAI-ը եւ TOSHIBA- ն:

Կը մաղթենք որ մրցաշարքը ընթանայ նոյնքան յաջող որքան տոքթ. Վիգէն ճիգմեճեանը ծրագրած է գայն: Իսկ Եգիպտական խումբին կը մաղթենք որ տիրանայ մրցաշարքի բաժակին:

Սօսի Ներետեան/ Յակոբեան

* Տաճարը կառուցուած է Ամինհոդէպ III-ի (1390-1352 ՔԱ) շրջանին ու Նուիրուած է Ամին չաստուածին: Յետագային, ինչպէս Ռամսէս II-ի (1279-1213 ՔԱ) եւ Նոյնիսկ Մեծն Աղեքսանդրի (332-323 ՔԱ) շրջաններուն շատ մը կոթողներ աւելցուած են հոն:



ՇՈՂԱՎԱՐԱԾ ԾԱՌԵՐ

Աշուն է: Եգիպտոսի համար ոչ այնքան գունազարդ, սակայն գեղեցիկ աշուն է: Աղեքսանդրահայերու համար ան անելի գունաւոր եղաւ, երբ Աղեքսանդրահայ գեղանկարիչ Համբար Համբարձումեանի ծննդեան հարիւրամեակին նուիրուած ցուցադրութեան բացումին օրը մօտեցաւ: Տօն է, ոչ միայն անոր հարազատներուն, այլեւ բոլորիս համար...

Աղեքսանդրիոյ Արուեստագէտներու Ակումբը (Atelier) հայկական գոյներով կը շնչէ: Յաճախ չի պատահիր, որ այսքան մարդաշատ ու ջերմ ըլլան այս սրահները: Պատերն այստեղ տաք գոյներ հագած են: Գոյներ հայկական, գոյներ ներշնչումի, գոյներ ինքնաբոլիս, վերապրումի ու վերածնման: Ցուցադրուած է եգիպտահայ նկարիչ – արձանագործներու գունագեղ փունջ մը: Ներկայացուած են արուեստագէտներու քանի մը սերունդ: Յորելենական ցուցահանդէսը մտայղացող եւ կազմակերպող արուեստագէտ Հրանդ Թէշիշեանը ստեղծագործութիւնները պատերուն զետեղած է ժամանակագրական շարքով: Մուտքին՝ հարկաւ Համբարն է: Առաջին սրահին մէջ եգիպտահայ կերպարուեստի նահապետներն են՝ Երուանդ Տէմիրճեան, Վահրամ Մանաւեան, Ալեքսանտր Սարուխան, Աշոտ Չօրեան, Արտէ Թօփալեան, Օննիկ Աւետիսեան, Վահան Հովիւեան, Բիւզանդ Կոճամանեան եւ անշուշտ Համբար Համբարձումեան:

Յաջորդ սրահը 90-80 տարեկաններն են եւ ան-

լի երիտասարդ սերունդի արուեստագէտներ՝ Սիմոն Շահրիկեան, Ճոն Բաբազեան, Ժիրայր Բալամուտեան, Շանթ Աւետիսեան, Հրանդ Թէշիշեան, Վահէ Վարժապետեան, Ալին Ճիգմեճեան...


Կը թղթատես անցեալի ծալքերը եւ ծովու մը պէս կ'ալեկոծուի յիշողութիւնը:

Սրահները շրջելով, պահ մը ինծի թուեցաւ, թէ ծովու տակ ննջող տարիները վեր ելան ու ալիքներուն հետ՝ կոհակ առ կոհակ արթնցան քունէն: Արթնցան, որ նոր շունչով մը ու հեզութեամբ, փարին ծովու ջուրերուն, այսօրուայ կեանքին, նոր սերունդի յիշողութեան:

Լաւ բան է յիշողութիւնը: Բայց... լաւ է, երբ կը յիշենք մարդոց լաւ գործերը, ուրախութիւն, հպարտութիւն պարզեւող, երախտագիտութիւն ու ճանաչողութիւն ընծայող յիշողութիւնը:

Բայց...

Որքան ալ ցանկանք չյիշել զարհուրելի պատուհասը, որ պատեց մեր ազգին, անկարելի է: Ահա եգիպտահայ նկարիչներու հոյլ մը, որ անմիջական կապ ունի Հայոց Մեծ Եղեռնին հետ... Ամենքն ալ եղեռնի սերունդ են: Եգիպտահայ բառն ալ այդ սերունդն է... Ոմանք՝ մինչեւ 1915-թուականը ստիպուած եղան ձգել հայրենի տունն ու երկիրը, ոմանք՝ այդ մարդակուլ օրերուն մագապուրծ ազատեցան, ոմանք ալ վերապրողներու զաւակներ են: Ամենուն նկարներուն մէջ թախիծ կայ՝ կորուսեալ հայրենիքի կարօտ... Մի՞թէ այդ կարօտը չէ նկարներէն մեզի նայող աչքերուն մէջ: Աչքեր, աչքեր, աչքեր



Նկարիչ Համբար Համբարեանի ծննդեան 100-ամեակին նուիրուած ցուցահանդէսին ցուցօնները



կանացի, այր մարդու, եգիպտուհիի կամ նուբիացիի, պարուհիի թե ծաղրածուի, նազանի աղջկայ, թե պետեհիի, նոյնիսկ եղնիկներուն աչքերը թախծոտ են:

Համբարի ծամերը տերեւաթափ են ու հողմահալած: Լքուած ու ջարդուած է նաւակը: Աղէքսանդրիա ծնած է նկարիչը, բայց յիշողութեան աչքը չես կրնար փակել:

Վահէ Վարժապետեանի նկարներուն մէջ բացակայ գոյն մը կայ, երանգ մը: Գուցէ հայրենի եզերքի գոյներն ե՞ն անոնք... Ալին ճիզմեճեանի «Դիմանկարի» ուրախ թուացող կինը իր թեթեւ հագուստներուն, սեթեւեթ գլխարկին ու փափուկ ժանեակներուն մէջ ծածուկ տիրութիւն մը կը քողարկէ, թախծոտ հայացք...

Սահուն ու ողորկ թուացող աշխարհի վրայ խոցեր կան, որ կը ցցուին ու կը ծակեն ամէն աչք... Այսպէս կը տեսնէ աշխարհը Արմէն Կրպոյեանը, թեպէտ ան երրորդ սերունդն է վերապրողներու:

Շանթ Աւետիսեանի պարուհիին հագուստի ծալքերէն անգամ, կարօտ կը ծորի...

Բոլոր ստեղծագործութիւններուն մէջէն նոյն թելը կ'անցնի. թախիծ, կարօտ... Բայց այսօր տարեդարձ է, Համբար Համբարծումեանի 100 ամեակը... Համբարը 100 տարեկան է: Կը նշանակէ, որ հարիւր տա-

րի առաջ ալ հայերը Եգիպտոս եկած էին եւ անոնց ստեղծագործ, արարող հոգին, օտար երկրի մէջ ալ արուեստ կ'արարէր եւ կը շարունակէ արարել:

«...Յոբելեաններն ու ցուցադրութիւնները մարդոց յիշողութիւնը թարմացնելու համար են, ձեւ մըն է, որ մեծերը յիշեն, իսկ նոր սերունդը ծանօթանայ իր արուեստագետներուն...» Բացման խօսքին մէջ ըսաւ արուեստագետ՝ Հրանդ Զէշիշեանը: Եւ իր խօսքին հաւատարիմ՝ ամբողջ շաբթուայ ընթացքին, ամէն մէկ այցելուի հետ շրջեցաւ սրահները, բացատրեց, պատմեց իւրաքանչիւր նկարի ու նկարիչի մասին:

Իսկ ցուցասրահ այցելած աշակերտներուն՝ աւելի պարզ ու հասկնալի լեզուով կը ջանար բացատրել: Սիրով կը պատասխանէր անոնց բոլոր հարցումներուն:

Յողուածս կրնայի վերնագրել «Յոբելեանական Գուցադրութիւն», «100- ամեակ», «Գուցադրութիւն նուիրուած...», բայց Գահիրէի ՀԲԸՄ-ի նախաձեռնած այս ցուցադրութիւնը բազմաթիւ երեսակներ ունի: Այստեղ ե՛լ ցուցադրութիւն կայ ե՛լ յոբելեան, ե՛լ պատմութիւն կայ ե՛լ հպարտութիւն, ե՛լ յիշողութիւն կայ ե՛լ յիշեցում...

Անժիկ Կանիմեան
Աղէքսանդրիա,



Յուցահանդէսի ներկաներէն մաս մը



Յուցահանդէսի այցելուներէն մաս մը



Արուեստագետ Հրանդ Զէշիշեան Պողոսեան Ազգ. Վարժարանի աշակերտներուն բացատրութիւններ կու տայ նկարներուն եւ նկարիչներուն մասին



Աղէքսանդրահայ քանդակագործ Սարգիս Թօսունեան Յուցահանդէս այցելու ուսանողներուն բացատրութիւն տուած պահուն



ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ ՆՇՈՒՄԸ ԳԱՇԻՐԵԻ ՄԷՋ

2009 թուականի Ապրիլի քսանչորսն է: Մի քանի տարիներ մեզ կը բաժնեն ոգեկոչելու դարադարձը 1915-ի Մեծ Եղեռնին զոհ գացած մեր նահատակներուն:

Հայութիւնը դեռ կը սպասէ արդարութեան հաստատման եւ վնասներու հատուցման:

Այսօր Մեծ Եղեռնի 94րդ տարելիցն է: Համաձայն Գահիրէի մամուլին մէջ լոյս տեսած յայտարարութեան, այս առիթով Ս. Գրիգոր Լուսաւորիչ Տաճարին մէջ, երեկոյեան ժամը 7:00-ին, Սուրբ եւ Ամմահ Պատարագ պիտի մատուցուի, պիտի պատարագէ Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեան եւ ապա հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, ծաղկեպսակներ պիտի զետեղուին մեր նահատակներուն ի յուշ կառուցուած մատուռին մէջ, նաեւ Ս. Եկեղեցւոյ պարտեզին մէջ տեղադրուած խաչքարին առջեւ:

Մօ. Միհրան Ղազէլեանի ղեկավարութեամբ «Շնորհալի» երգչախումբը եկեղեցիին վերնատունէն եւ սարկաւազներն ու դպիրները խորանին առջեւէն ձայներու կատարեալ ներդաշնակութեամբ կը մատուցեն իսկապէս «Սուրբ ու Ամմահ Պատարագ»-ը որ հոգեյոյզ է ու հոգեպարար, իսկ Սրբազան Հօր արտասանած քարոզը՝ պատշաճ ու իմաստալից:

Այս տարի 1909-ին Ատանայի մէջ իրագործուած հայոց կոտորածներու 100-ամեակն է: Այս առիթի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինէն ՆՍՕ ՏՏ Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի յղած Սրբատառ Կոնդակը կ'ընթերցէ Սրբազան Հայրը...

«Հաստատուն մնանք հաւատի մէջ՝ աստուածասիրութեան, մարդասիրութեան, մեր արդար դատի: Հաստատուն մնանք հայրենի յիշատակները եւ ազգային աւանդները առաւել նախաձեռնութեամբ պահպանելու կամքի ու ձգտումի մէջ եւ միշտ ապրենք սիրով առ Աստուած, առ մեր Սուրբ եկեղեցին եւ հայրենիքը: Աղօթենք առ Տէրն Ամենակալ, որ ազգային, եկեղեցական մեր անդաստանում արգասաւորուեն եւ առատ պտուղներ բերեն մեր ժողովրդի համատեղուած ջանքերը՝ ի սեր մեր հայրենիքի եւ աշխարհասփիւռ հայ կեանքի, մեր լուսավառ գալիքի եւ ազգային մեր բոլոր իղձերի



Մեծ Եղեռնի զոհերուն նուիրուած խաչքար-յուշարձանը Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին շրջաբակին մէջ

մարմնաւորման» կը պատգամէ Վեհափառը:

Թափորով կուղուինք դէպի եկեղեցւոյ շրջաբակին մէջ տեղադրուած խաչքարը: Կը դիտեմ ներկաները, որոնց թուաքանակը կը յուշէ վերեւ նշած յայտարարութեանս վերջաւորութեան գրուած երկտողը:

«Հայրենիքի եւ հաւատքի համար մարտիրոսացեալներն ու նահատակները յարգել, անոնց արժանի յաջորդները ըլլալ կը նշանակէ»:

Աւա՛ղ, սակաւ է թիւը անոնց, որոնք ինքզինքնին մեր նահատակներուն արժանի յաջորդները կը նկատէին :



Այսօր Ապրիլ քսանհինգն է: Օրեր առաջ դարձեալ մամուլով յայտարարուած էր, թէ Եղեռնի 94րդ տարելիցին առթիւ համագաղութային յուշահանդէս պիտի կայանայ այսօր երեկոյեան ժամը 8:30-ին, Զելիոպոլսոյ «Պըլըքտանեան» հանդիսասրահին մէջ, հովանաւորութեամբ եգիպտահայ Զոգեւոր Պետերուն, Նախաձեռնութեամբ Գահիրէի Ազգային Իշխանութեան եւ կազմակերպութեամբ Գահիրէի բոլոր միութիւններուն:

Այս տարի եւս օրուան դասախօսը Զայաստանէն հրաւիրուած է, իսկ յուշահանդէսի գեղարուեստական յայտագիրին իր մասնակցութիւնը կը բերէ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբը խմբավարութեամբ մօ. Միհրան Ղազէլեանի:

Յուշահանդէսին բացումը կը կատարէ տոքթ. Սուրէն Պայրամեան: Ան կը խնդրէ ներկաներէն որ մէկ վայրկեան յոտընկայս լռութեամբ յարգեն յիշատակը Մեծ Եղեռնի զոհերուն, որմէ ետք կը հրաւիրէ Զայաստանի Պետական Զամալսարանի դասախօս, պատմական գիտութիւններու տոքթ. փրոֆ. Զայկ Աւետիսեանը ունենալու իր ելոյթը:

Փրոֆ. Զայկ Աւետիսեան իր մասնագիտութեանը տիրապետողի յատուկ հմտութեամբ կը ներկայացնէ իր նիւթը: Ան կ'անդրադառնայ ցեղասպանութեան, անոր հետեւանքներուն ու միջազգային ճանաչման գործընթացին, տեղեկութիւններ կու տայ ցարդ այս ուղղութեամբ կատարուած աշխատանքներուն ու ձեռք ձգուած յաջողութիւններուն մասին ու շեշտը կը դնէ մեր ապագայ ակընկալիքներուն իրականացման ճանապարհին կատարուելիք աշխատանքներուն վրայ:

Մօ. Միհրան Ղազէլեան օրուան գեղարուեստական յայտագիրը կազմած է բժախնդրօրէն: Անոր ընտրած երգացանկը «Արաքս»-ի ղօղանջով ներկաները «Ատանա»-էն «Ազատ Զայաստան» կը փոխադրէ:

Սմբատ Բիւրատի «Ատանայի Ողբը» առանձին չէ բեմին վրայ: Բեմի խորքին՝ կը ողբայ Նաեւ սեւ շղարշներով պարուրուած Արարատը, որուն լանջին մոմեր կան վառած: Ողբ կ'արտայայտեն Սիլ-

վա Թերզիպաշեանի ձայնը եւ Նեկտար Պալեանի պարը:

Երգչախումբը ելոյթ կ'ունենայ եօթը երգով: «Արի իմ Սոխակ» մշակում Մ. Ղազէլեանի, «Մենք Ուզում ենք» խօսք եւ երաժշտութիւն Պարոյր Զայրիկեանի, մշակում Ա. Պերպերեանի եւ «Թող հնչեն շեփորք» մշակում Դանիէլ Երաժիշտի, երգչախմբային փոխադրումը Մ. Ղազէլեանի:

Զոս պահ մը կանգ կ'առնէ երգչախումբը: Բեմ կը յառաջանայ տոքթ. Անի Օհաննեսեանը, ասմունքելու Սիամանթոյի «Պարը»: Զեղինակին հոգւոյն ճիչն է որ անցնելով Անիի հոգիէն կը հասնի մեզի: Կարծես երիտասարդուիին ամբողջ Էութիւնն է որ կը պոռթկայ ի լուր կատարուած խնենշութեան: Անիին բացառիկ ելոյթը կը շքմեցնէ մեզ:

Երգչախումբին կատարմամբ կը հնչէ Ալեքսանտր Յարութիւնեանի «Ռեքուիեմ»-ը ու կը հանդարտեցնէ մեր փոթորկած հոգիները, իսկ Ռոպէրթ Ամիրխանեան մեզ կը տանի «Երագ իմ երկիր Զայաստան»: Երգը, որուն երգչախմբային մշակումը կատարած է Ռոպէրթ Պետրոսեան, երգչախումբը կը կատարէ ոգեւորութեամբ ու կը հասնի Ստեփան Լուսիկեանի գովերգած «Ազատ Զայաստան»-ին ուր եւ կանգ կ'առնէ «Արաքս»-ը:

Գերշ. Տ. Աշոտ Եպսկ. Մնացականեան կուսնենայ օրուան յատուկ կարճ ելոյթ մը, եւ ապա՝ Արի. Տ. Գրիգոր Եպսկ. Գուսանի հետ միատեղ արտասանուած աղօթքով կ'աւարտի Մեծ Եղեռնի 94-ամեակին նուիրուած յուշահանդէսը:

«Տ.»





ԳԱՀԻՐԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԾ ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

16 Մարտ 2009-ին տեղի ունեցավ Գահիրեի Համալսարանի Հայագիտական Կեդրոնի կազմակերպած Երկրորդ Միջազգային Գիտաժողովը Գահիրեի Համալսարանի գրականության կաճառին մեջ: Այս տարուայ համագումարին թեման էր «Հայ Արաբ Մշակութային Յարաբերությունները»:

Գիտաժողովին բացումին խօսք առին համալսարանեն եւ բարձրագոյն կրթութեան նախարարութենէն պաշտօնատարեր, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան Արտակարգ եւ Լիազօր Դեսպան տոքթ. Ռուբէն Կարապետեան եւ Հայագիտական Կեդրոնի տնօրէնուհի Փրոֆ. Չէյնապ Ապու Մէնսա:

Գիտաժողովը կը վայելէր բարձր հովանաւորութիւնը Գահիրեի Համալսարանի Նախագահին ինչպէս եւ Գրականութեան Կաճառի տնօրէնին:

Գիտաժողովը կը բաղկանար չորս բաժիններէ եւ բացման ու փակման ելոյթներէ:

16 մասնագետներ, որոնք եկած էին Սուրիայէն, Լիբանանէն եւ Հայաստանէն ուսումնասիրութիւններ ներկայացուցին: Եզիպտացի մասնագետները անշուշտ մեծամասնութիւն կը կազմէին որոնք շարքին երկու եզիպտահայեր՝ յանձինս տոքթ. Նալիիի Համբիկեանի եւ տոքթ. Վարուժան Գազանճեանի: Գիտաժողովի լեզուն արաբերէնն էր:

Ներկայացուած նիւթերը այլազան էին եւ կարելի է զանոնք ամփոփել հետեւեալ ձեւով:–

Ա. Հայերը ոչ հայկական աղբիւրներու մէջ (Արաբական, Իսլամական, Լատինական)

Սուրիոյ մէջ Հայաստանի Արտակարգ եւ Լիազօր Դեսպան արաբագետ տոքթ. Արշակ Փոլատեան ներկայացուց «Հայերը Իսլամական եւ Արաբական Աղբիւրներու մէջ» նիւթը, լատինական աղբիւրները ներկայացուց՝ Աղեքսանդրիոյ Համալսարանէն տոքթ. Մակտա Ալտեմի:

Բ. Հայերու ներդրումը արաբական ժամանակակից մշակոյթին մէջ

Հայերու ներդրումը արաբական ճարտարապետութեան մէջ նիւթին անդրադարձաւ տոքթ. Նալիիի Համբիկեան, լուսանկարչութեան՝ տոքթ Մուհամետ Ռիֆաադ Էլ Իմամ, գրականութեան՝ Սուրիայէն տիար Սամիր Արպաշ, արաբական զարթօնքին մէջ՝ տեարք Ղասսան Զաճօ եւ Ապտէլազիզ Ալտրուպի Սուրիայէն եւ Սալէհ Չահր Էլ Տին Լիբանանէն: Ընդհանրապէս արաբական մշակոյթին մէջ հայ մտաւորականութեան ներդրումը ներկայացուց Եզիպտոսէն տիար Ահմետ Էլ Ատաուի, օրինակ բերելով Ալեք-



Չայնս Էյ Գահիրեի Համալսարանի Հայագիտական Կեդրոնի տնօրէնուհի փրոֆ. Չէյնապ Ապու Մէնսա, ՀՀ-ի Եզիպտոսի դեսպան տոքթ. Ռուբէն Կարապետեան, Եզիպտոսի Բարձրագոյն Կրթութեան նախարարի առաջին տեղակալ տոքթ.Մոհիյի Կապէր Ապու Ալի եւ Գահիրեի Համալսարանի Գրականութեան Բաժնի տնօրէն տոքթ. Ահմետ Չայետ

սանտր Աբգարիոսը:

Գ. Արաբ Մշակոյթը հայկական տեսանկիւնէն դիտուած

Տոքթ Վարուժան Գազանճեան քննարկեց Ապու Ալլաա Ալ Մաարիին նուիրուած Ալեքսիք Իսահակեանի բանաստեղծութիւնը, իսկ տոքթ. Նակիպ Իսքանտար ներկայացուց իսլամական արշաւանքները հայ պատմիչ Սէբէնսի տեսանկիւնէն դիտուած :

Դ. Չանագան այլ թեմաներ

Այս բաժինին մէջ հանդէս եկան Գահիրեի Համալսարանէն փրոֆ. Սալիտ Աշմաուի Եուհաննա Էլ Արմանիի մասին: Երուսաղէմի Հայ գաղութին մասին անդրադարձաւ տոքթ Մակտ Էզգաթ իսկ Ս. Յակոբայ Միաբանութեան կալուածներուն մասին անդրադարձաւ տոքթ. Կամալ Զամար Մահմուտ:

Պարսկահայ Միրզա Մելքում Խանի մասին թուղթ մը ներկայացուց պասրկագետ տոքթ. Մահմուտ Ալլաուի:

Պատմական Հայաստանի մէջ յայտնաբերուած արաբական գեղագրութեան նմոյշներուն անդրադարձաւ սուրիացի տոքթ. Շաուքաթ Եուսէֆ:

Գիտաժողովի փակման ընթացքին փրոֆ. Չէյնապ Ապու Մէնսա յայտնեց, թէ ելոյթին յառաջիկայ տարուայ համագումարին նիւթը պիտի ըլլայ «Հայերը եւ Արաբական Աշխարհի Տնտեսութիւնը»:

Արփի Խաչերեան



ՇՊԳՒՅՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՂՕՂԱՆՋՆԵՐ

Երգը՝ ճիչն է մարդկային հոգիին: Իսկ երբ կը միա-
նան շա՛տ ճիչեր... Որպեսզի տարբեր, երբեմն բազմ-
ազգ, գունաւոր, այլահաւատք հոգիներու ճիչերը, հա-
մահունչ ղօղանջներ դառնան, զանոնք դասաւորող հո-
գեբան հարկաւոր է, որ իր հմտութեամբ աղմուկը, վե-
րածէ ականջ շոյող բազմաձայն երգչախումբի...

27 Մարտի գարնանային այս գեղեցիկ օրը երգչա-
խմբային բացառիկ երգահանդես յայտարարուած է:
Բացառիկ է, որովհետեւ հանդեսը պիտի կայացնեն եր-
կու երգչախումբեր՝ Աղեքսանդրիոյ Մատենադարանի
երգչախումբը՝ խմբավար՝ Զայկ Աւագեան եւ Գահիրիի
Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբը՝
խմբավար՝ Միհրան Ղազէլեան: Բացառիկ է նաեւ այն
պատճառով, որ «Արաքս» երգչախումբը կը բոլորէ իր
հիմնադրման հինգ տարին:

«Արաքսէն» առաջ եղած են շատ երգչախումբեր՝
տարբեր անուններով, տարբեր երգացանկերով...

Քանզի հայ մարդը աշխարհի մէջ իր անկիւնը գտ-
նելէն վերջ, իր տունը կառուցելէն առաջ, դպրոց ու եկե-
ղեցի կը հիմնէ, որ հայրենիքէ զրկուած մանուկ սե-
րունդներուն իր գիրն ու մշակոյթը ուսուցանէ: Եւ ուր
դպրոց ու եկեղեցի՝ հոն ալ երգչախումբ ու պատա-
րագ...

Եգիպտոսի հայկական համայնքը հիմնադրուած
օրէն, միշտ ունեցած է իր մշակութային կեանքը՝ մշա-
կութային սրահներէն եւ ազգային վարժարաններէն
ներս: Բազմապիսի պարային, թատերական խումբեր
եւ երգչախումբեր՝ իրենց մանկական մասնաճիւղերով,
տասնամեակներու ընթացքին իրար յաջորդած են: Գիր
ու մշակոյթ ունեցող մեր ժողովուրդը, կրնա՞ր բնաւ գո-
յատնել առանց մշակոյթի, առանց երգ- երաժշտու-
թեան:

Խմբավար Միհրան Ղազէլեանի հիմնադրած երգչա-
խումբն է «Արաքսը»: Ամէն անգամ, երբ երգչախումբե-
րը կը մնան առանց ղեկավարի, կը գունազրկուին, կը
թռչնին, կը դալկանան... Կը նմանին լռած զանգակի,
որ դիպուածով կը ղօղանջէ միայն: Իւրաքանչիւր խմբ-
ավար նոր շունչ ու ոգի կու տայ նուիրեալ երգիչներու
խումբին՝ ստեղծելով նոր երգչախումբ: «Արաքս»
անուանեց իր երգչախումբը մօ. Ղազէլեան՝ վստահ ըլ-
լալով, որ անոր կարկաչուն հոսքը կը շարունակուի, ղօ-
ղանջը՝ կը լսուի պարբերաբար...

Երբ մօ. Զայկ Աւագեանը ստանձնեց Աղեքսանդրիոյ
Մատենադարանի երգչախումբը, դժուար էր գայն երգ-
չախումբ կոչել: Կարճ ժամանակ անց, խմբավարին
աշխատասիրութեան շնորհիւ, ե՛ւ մասնակիցները
շատցան, ե՛ւ մակարդակը բարձրացաւ, ե՛ւ երգացան-
կը բազմազան դարձաւ, ե՛ւ համերգներու թիւն աւել-
ցաւ... Այսօր Մատենադարանն ունի նաեւ մանկական
երգչախումբ, որ նոյնպէս կը ղեկավարէ մօ. Աւագեա-
նը: Զայ համայնքի կարգ մը անդամներ իրենց
մասնակցութիւնը կը բերեն այս երգչախումբերուն:

Երգչախումբերը սիրողական են. անդամները
իրենց ազատ ժամերը կը տրամադրեն փորձերուն: Յա-
ճախակի բացակայութիւնները արգելք կ'ըլլան, առա-
վել արդիւնաբեր գործունեութեան:

Այսօր «Արաքս»-ի հիմնադրման հինգ ամեակն է, եւ
Աղեքսանդրիոյ Մատենադարանի երգչախումբը եկած
է տարեդարձի: Տանտիրոջ իրաւունքով առաջինը ելոյթ

ունենալու պատիւը «Արաքսը» զիջեց հիւրերուն:

Պախի անմահ երաժշտութեան հոգեպարար հըն-
չիւնները կ'ազդարարեն երգահանդեսին սկիզբը եւ
անմիջապէս կը գերեն հանդիսատեսը: Մօ. Զայկ Աւագ-
եանը ոչ միայն հմուտ խմբավար է, այլ նաեւ դաշնա-
կահար: Ան է որ կը նուագակցի երգչախումբին: Կը
նուագէ եւ կը ղեկավարէ:

Յնչեց արեւմտաեւրոպական հանճարեղ երաժշտա-
հաններու ստեղծագործութիւններէն սքանչելի փունջ
մը. Պախ, Մոցարտ, Վերտի, Վիվալտի...

Եթէ Աղեքսանդրիոյ Մատենադարանի երգչախում-
բը ներկայացաւ եւրոպական դասականներով, ապա
«Արաքս»-ի երգացանկը մեծ մասամբ հայկական էր:
Խմբավար Միհրան Ղազէլեանը նուրբ ընտրութիւն կա-
տարած է Սայաթ- Նովայէն նիչէն մեր օրերը, Կոմիտա-
սէն մինչէն Գոլասն Շերամ...

Երբ «Արաքս»-ը սկսաւ իր ելոյթը, կը նուագակցէր
օտարազգի դաշնակահարուհի՝ Վլատիսլավա Շնայ-
տերը: Բոլոր երգերուն՝ դասական թէ գոլասնական,
Սայաթ- Նովա, թէ Կոմիտաս՝ դաշնակով ընկերակցե-
ցաւ Վլատիսլավան: Բայց երբ պիտի հնչէր Եղիշէ Զա-
րենցի եւ Աշոտ Սաթեանի «Ես իմ անուշ Զայաստանի»
ստեղծագործութիւնը, հայու մատներու անհրաժեշ-
տութիւն յառաջացաւ: Եւ Զայկ Աւագեանը հայկական
շունչով հնչեցուց դաշնակը: Չեմ գիտեր Վլատիսլավա
Շնայտերն էր պատճառը, թէ՞ մօ. Միհրան Ղազէլեանի
նրբանկատութիւնը: Թերեւս պատճառը «Ես իմ անուշ
Զայաստանի»-ն է՞ր, որ պիտի միայն հայերու շունչով
հնչէր: Նախապէ՞ս մտածուած էր, թէ՞ դիպուածաւ,
սքանչելի էր...

Աղեքսանդրիոյ Մատենադարանի երգչախումբէն՝
Լիտիա Խունկանեանը, «Արաքս»-էն Սիլվա
Թերզիպաշեանը, Լալա Նիկոլեանը, Սերժ Սետեֆե-
եանը պատուով կատարեցին իրենց մեներգները՝ հա-
ճելի պահեր պարգեւելով հանդիսատեսին: Երգահան-
դեսը կայացաւ իր բոլոր օրէնքներով, կանոններով,
հրատարակուած յայտագիրով, բեմի զարդարանքնե-
րով...

Ի դէպ, զարդարանքներու մասին: Բեմը ձեւավոր-
ւած էր գեղեցիկ ծաղիկներով, ծաղիկներու համադրու-
մով, հսկայական, ո՛չ բնական վարդերով, նոկնիսկ դե-
պի բեմ բարձրացող սանդուխները ծաղկազարդ են:
Անշուշտ ամէն ինչ ճաշակաւոր էր եւ գեղեցիկ:

Բայց...

Բայց մը կայ, որ... Գեղեցիկ են միթէ՞ կենդանի երգ-
երաժշտութեան քով անկենդան, անշունչ, անգոյն ծա-
ղիկներ: Ես պիտի նախընտրէի թարմ ծաղիկները: Թող
քիչ ըլլար, բայց շնչող, բնական, կենդանի: Չէ՞ որ գա-
րուն է ...

Ձեւաւորողներու ներողամատութիւնը կը հայցեմ,
ըսելով, թէ ԱՐԱՔՍ բառը անընթեռնելի էր: Մենք կը
հպարտանանք, թէ մեր գիրերը նման չեն ոչ մէկ այլ այ-
բութեանի, բայց բեմի յետնապատին բազմած այդ հինգ
տառերը հայերէնէ գատ ամէն ինչի էին նման:

Թող յարատեւեն երգչախումբ-զանգակները, եւ ղօ-
ղանջեն միայն ուրախ նոթաներով:

Անժիկ Կանիմեան



ԱՅՍ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՐԱԲԵՐԵՆՈՎ ԳՐԵԼ ارمينية ԹԷ° ارمينيا

Վաթսունականներեն մինչև ինսուլական թուականները մեր հայրենիքի անունը արաբերեն լեզուով գրուած տեսած ենք այս ձեւով, "ارمينيا السوفيتية" կամ "ارمينيا" :

Անկախութիւնէն ետք երբ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը բացուեցաւ Գահիրէի մէջ, դեսպանութեան մուտքի ցուցատախտակին վրայ կարդացինք "سفارة جمهورية ارمينيا": Նոյնպէս դեսպանութեան կայքէջի արաբերեն բաժնին մէջ, կը կարդանք "سفارة جمهورية ارمينيا" : Դեսպանութեան հրատարակած արաբերեն լեզուով պարբերական տեղեկատուի անուանումն է "اخبار ارمينيا" :

Երբ Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան Գահիրէ այցելեց ինսուլական թուականներուն եւ աւելի ուշ երբ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերդ Քոչարեան Գահիրէ այցելեց երրորդ հազարամեակի սկիզբը, եգիպտական մամուլին մէջ գրուեցաւ՝ "رئيس جمهورية ارمينيا" .

Երբ Հայաստանի Հանրապետութեան վաղամեռիկ վարչապետ Անդրանիկ Մարգարեան, աւելի ուշ նախկին արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան եւ վերջերս ներկայ արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեան (ՀՀ առաջին դեսպանը ԵԱՀԻ մէջ) Գահիրէ այցելեցին, եգիպտական մամուլին մէջ յիշատակուեցան այսպէս, "رئيس وزراء ارمينيا", եւ "وزير خارجية ارمينيا" .

Երբ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կայքէջի արաբերեն բաժինը այցելեցի, նկատեցի թէ Հայաստանի Հանրապետութիւնը յիշատակուած է "ارمينيا" անուանումով:

Երբ Արաբական Լիկայի կայքէջը այցելեցի կարդացի 19 Մարտ 2005 թուակիր հետեւեալ հաղորդագրութիւնը:

الأمين العام يستقبل وزير خارجية أرمينيا

يستقبل السيد عمرو موسى الأمين العام للجامعة العربية السيد فارتان اوسكانيان وزير خارجية أرمينيا وذلك بمقر الامانة العامة.

Կարգ մը բառարաններու մէջ "ارمينيا" եւ "ارمينية" անունները որոնեցի ու հետեւեալ արդիւնքին հասայ:

Առաջինը կարգ մը բառարաններու մէջ գտայ, մինչ երկրորդը գոյութիւն չունէր:

المورد բառարան

منير البعلبكي قاموس انجليزى - عربى - بيروت لبنان - دار الملايين

Գտայ Armenian, սակայն ոչ Armenia

أرمنى أحد أبناء أرمينيا - الارمنية لغة الأرمن - أرمنى

المنجد բառարան

قاموس المنجد فى اللغة والاعلام - دار الشروق - بيروت - لبنان - الطبعة الثلاثون 1988

Զարտեսներու բաժնին մէջ գրուած է "ارمينيا" լրատութեան բաժնին մէջ قسم الاعلام

նոյնպէս:

أرمينيا منطقة جبلية فى غرب آسيا - أرمينيا احدى جمهوريات الاتحاد السوفيتى

Hans Weber բառարան معجم اللغة العربية المعاصر

A Dictionary of Modern Written Arabic - Librairie du Liban - Macdonald and Evans Ltd.

London 1980 եւ գտայ հետեւեալը

The Armenian al armani الارمنى

Armenian Armani ارمنى

Armenia Arminiya أرمينيا

Վերոյիշեալ օրինակներէն կրնամ հետեւցնել թէ Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական անուանումը միջազգային, պաշտօնական շրջանակներուն մէջ արաբերեն լեզուով արմينيا է եւ ոչ ارمينية :



Արաբերեն լեզուի մեջ աշխարհի բոլոր ցամաքամասերու անունները ԱԼԻՖ-ով կը վերջանան ինչպես أمريكا، أستراليا، آسيا، أفريقيا، أوروبا :

Արաբերեն լեզուի մեջ ժամանակակից երկիրներուն մեծամասնութիւնը ԱԼԻՖ-ով կը վերջանան ինչպես

أثيوبيا ، أريتريا ، المانيا، البانيا، أندونيسيا، أوكرانيا، ماليزيا، موريتانيا، منغوليا، ليبيا، إيطاليا.....الخ

ինչո՞ւ Յայաստանը եւս չի վերջանայ ԱԼԻՖ-ով : **أرمينيا**

Երբ մի քանի լեզուագետներու կարծիքը առի այս հարցին մասին, ըսին թէ երկուքն ալ կարելի են, սակայն յիշեցին թէ "أرمينيا" is definit to be a noun, unique separate entity, clear: Այսինքն "أرمينيا" հաստատ գոյական մըն է, եզակի առանձին եութիւն մը, որը յստակ է:

Մինչ "أرمينية" makes it sound like an adjective, common, described as an adjective, follows the same pattern as adjective, smaller category than noun: Այսինքն "أرمينية" ածականի հնչողականութիւն ունի, հասարակ, կրնայ նկարագրուիլ նաեւ իբր ածական, ածականներու կառուցուածքին կը հետեւի, գոյականէն նուազ մակարդակի մը վրայ:

Այս երկուութիւնը առկայ է որովհետեւ, (654-1064) արաբ պատմագետներ այդպէս անուանած են Յայաստանը եւ այս ուղղագրութեամբ գրած "أرمينية": Այդ շրջանին պատշաճ էր այդպէս յիշատակել որովհետեւ Յայաստան փոքրիկ նահանգ մըն էր բաղդատմամբ կայսրութեան հսկայ տարածքին: Սակայն ներկայիս պարագան տարբեր է: Այժմ Յայաստան ժամանակակից պետութիւն մըն է որ ինքզինք անուանած է արաբերէնով "أرمينيا" եւ այդպէս ալ ընդունուած է միջազգային շրջանակներու կողմէ: Պարտինք յարգել այդ հանգամանքը եւ միշտ գրել նոյն ուղղագրութեամբ:

Ընթերցողին համար "أرمينية" շփոթ մըն է, երկիր "أرمينية" թէ լեզու "أرمينية": Երբեմն հեղինակը ինքը շփոթի մէջ է, ալ ուր մնաց ընթերցողը: Մինչ ունինք յստակ, կտրուկ, ստոյգ գոյականը "أرمينيا" , ինչո՞ւ անտեսենք:

Արաքսի Տերունեան- Խաչերեան

ՏԻԱՐ ԱՐԹՕ ՊՐԸՐՔՏԱՆԵԱՆԻ ՐԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ՐԳՄ-Ի ՄԷՋ

Շաբաթ, 21 Փետրուար 2009-ի, երեկոյեան ժամը 8-ին Յայ Գեղարուեստասիրաց Միութեան Թէքէեան հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ տիար Արթօ Պրըքտանեանի դասախօսութիւնը, որուն նիւթն էր «Փարաւոնեան Կրօնքը»: Ինչպէս ծանօթ է տիար Արթօ Պրըքտանեան կը հետեւի եգիպտաբանութեան եւ շրջանաւարտ եղած է այդ ճիւղին մէջ Գահիրէի Ամերիկեան Յամալսարանէն ապա իր մագիստրականը ստացած է նոյն ճիւղին մէջ Չիքակոյի համալսարանէն:

Երիտասարդ դասախօսը իր նիւթը ներկայացուց ամփոփ, յստակ եւ մատչելի ձեւով: Իր

նիւթին ներկայացումին համար ան օգտագործեց բացատրական սահիկներ:

Դասախօսութեան աւարտին ներկաները բազմաթիւ հարցումներ ուղղեցին, որոնց տիար Պրըքտանեանը պատասխանեց:

Կոկիկ հիւրասիրութեան մը ընթացքին, բոլոր ներկաները շնորհաւորեցին դասախօսը եւ անոր ծնողքը տեր եւ տիկին Օսնիկ եւ Արշօ Պրըքտանեանները, Արթոյին մաղթելով նորանոր յաջողութիւններ:

Դասախօսը խոստացաւ կրկին ելոյթ ունենալ հին եգիպտոսին մասին ներկաները հետաքրքրող նիւթերու շուրջ:



ՀԲԸՍ ԳԱՅԻՐԷ

ՀԲԸՍ-ի «ԾԻԱԾԱՆ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ ԵԼՈՅԹԸ ՏԻԿԻՆ ՍԻԻՋԱՆ ՄՈՒՊԱՐԱՔԻ ԳԼԽԱԴՈՐԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԵՋ



Ելոյթ ունեցաւ տիկին Սիւզան Մուպարաքի գլխաւորած Ամբողջական Հոգատարութեան Մշակութային Կեդրոնին մէջ: «Ծիածան»-ը եգիպտացի եւ հայ պաշտօնական անձնաւորութիւններու, պատասխանատուներու արուեստասերներու եւ ծնողներու ներկայութեան ելոյթ ունեցաւ հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով ցուցաբերելով գերազանց մակարդակ: «Ծիածան»-ի կարգ մը երգերուն Կեդրոնէն միացան մեներգիչներ եւ նուագածուներ:

Ոչ ոք կրնայ հերքել, թէ Գահիրէի ՀԲԸՍ-ի «Ծիածան» պատանեկան երգչախումբը եգիպտահայ գաղութէն ներս արձանագրած է զանազան յաջողութիւններ: Սակայն երգչախումբին մասնակցութիւնը ոչ-հայկական կազմակերպութիւններէ ներս սահմանափակ եղած է:

«Ծիածան»-ը մօ. Միիրան Ղազէլեանի եւ տիկին Գոհար Ղազէլեանի ղեկավարութեամբ, Ապրիլ 5-ին

Ամբողջական Հոգատարութեան Մշակութային Կեդրոնի տնօրէն տիար Սոհամէտ Ռաուֆ Իսմաիլ եւ եգիպտոսի ՀԲԸՍ-ի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տիար Պերճ Թերզեան ելոյթ ունենալով, իրենց խօսքին մէջ շեշտեցին զոյգ կազմակերպութիւններու գործակցութեան կարեւորութիւնը պահպանելու եւ տարածելու իրենց սեփական մշակոյթները՝ եգիպտականն ու հայկականը:

ՊՏՈՅՏ ԴԵՊԻ «ՈՒԱՏԻ ԱԼ ՌԱՅԱՆ»

1 Փետրուար 2009

Գահիրէի ՀԲԸՍ-ը կազմակերպած էր պտոյտ մը դէպի Ֆայումի մէջ բնապահպանուած «Ուատի Ալ Ռայան» ջրվեժը: Ֆայումի շրջանը կը սեպուի Եգիպտոսի ամենագեղեցիկ եւ ամենաբնապահպանուած վայրերէն մին:

Մասնակցողներէն խումբ մը գիշեր մը անցուցած էին «Չատ Մուսաֆեր» բնապահպանողին մէջ: Անոնց միացաւ Գահիրէէն ժամանած խումբը եւ բոլորը միասին ուղղուեցան դէպի ջրվեժը ուր անոնք մի քանի ժամուայ համար վայելեցին գեղեցիկ բնութիւնը: Կեսօրուայ ճաշին մասնակիցները վայելեցին Զարուն Լիճի ափին գտնուող «Նիու Փանորամա Շագշուգ» պանդոկի ճաշարանին առջեւ պարզուած



գեղեցիկ տեսարանը ու ճաշակեցին համել ուտեստեղէնը:

Արփի Խաչերեան



**ԳԱՇԻՐԷԻ ՀԲԸՄ-Ի
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ
«ԴԱՍՆՆԹԱՅՔ - ԱՇԽԱՏԱՆՈՑ»Ը (WORKSHOP)**



Հայ ժողովուրդին համար Ապրիլը դարձած է Եղեռնի զոհերու յիշատակութեան ամիս: ՀԲԸՄ-ը իր հիմնադրութեան սկզբնական շրջանին նպատակադրած էր օժանդակել հայ ազգի գոյատեւման եւ օգնութեան ձեռք մեկնել ցեղասպանութենէն տուժածներուն:

Այժմ ՀԲԸՄ-ի նպատակները բազմերես են, որոնց մէջ է դարձեալ հայ ինքնութեան պահպանումը: Այս ուղղութեամբ Գաիիթի ՀԲԸՄ-ը 17 Ապրիլին կազմակերպած էր Հայկական Ցեղասպանութեան նուրիում «դասընթացք - աշխատանոց» մը 12-16 տարեկան պատանիներու համար:

Դասընթացք - աշխատանոցը պատրաստած էր եւ ներկայացուց տիկ. Արմին Զրետեանը: Առաջին մասին մէջ ան տուաւ կարճ դասախօսութիւն մը որուն ընթացքին շատ հարցեր ծագեցան եւ ներկաները այդ հարցերը քննարկե-

ցին: Փոքր ընդմիջումէ ետք երկրորդ բաժինին ժամանակ, պատանիները իրենց կարծիքները յայտնեցին ցեղասպանութեան մասին: Երրորդ բաժինին ընթացքին, անոնք բառախաղ խաղացին եւ քարտեսներուն վրայ նշեցին այն վայրերը ուր տեղի ունեցան ջարդերը: Տիկ. Արմինին օգնեցին օրիորդներ Աստղիկ Երանոսեան, Անի Օհանեսեան, Ռուբինա Ասլանեան եւ Արփի Խաչերեան:

Աւարտին տիկ. Արմին անդրադարձաւ «Սպիտակ Ջարդ»-ին եւ քաջալերեց ներկաները որ այդ հարցին մասին մտածեն եւ ստեղծեն իրենց սեփական կարծիքները: Կը յուսանք որ նման դասընթացք աշխատանոցներ յաճախ կը կրկնուին:

Արփի Խաչերեան



ՇԻՋԵՑԱԻ ԿԵԱՆՔԸ ՍՈՆԱ ՊԱԼԱԵԱՆԻ



Շաբաթ, 7 Մարտ 2009-ին, Սոնա Պալաեանի կանխահաս մահը կսկծալի անակնկալ մըն էր:

Եգիպտահայ արդէն իսկ Նօսրացած գաղութը իր զանազան մարմիներուն գործունեութեան յօժարակամ մասնակցութիւն բերող գիտակից հայուհի մը կորսնցուց, յանձին ողբացեալին:

Իր հօրենական տան մէջ թելածող հայրենասիրական եւ ազգասիրական ոգիով հասակ նետած Սոնան, իր կեանքը անմնացորդ կերպով նուիրեց տիար Մարտիկ Պալաեանի հետ կազմած ընտանիքին, միաժամանակ օգտակար մասնակցութիւն բերելով գաղութիս մէջ գործող ազգային, բարեսիրական ու մշակութային մարմիններուն:

Ողբացեալը հայկական Ընթերցասրահի Տիկնանց «Մարօ» Յանձնախումբի ժրաջան անդամուհիներէն էր, աշխատակից՝ «Զահակիր» շաբաթաթերթին, անդամ՝ Եկեղեցւոյ Տիկնանց Խնամակալութեան, Նուպարեան Ազգային Վարժարանի Հոգաբարձութեան եւ նոյն վարժարանին Տիկնանց Խնամակալութեան:

Ողբացեալը անդամ էր նաեւ ՀԲԸՄ-ի Գահիրիէի Մասնաճիւղին, ուր եւս երբ հարկ էր, իր օժանդակութիւնը չէր զլանար ու այլ տիկիներու հետ կ'աշխատէր յանձնարարուած գործը պատիւով գլուխ հանելու:

Ան որոշ շրջան մը մաս կազմած էր նաեւ Եգիպտոսի մօտ ՀՀ դեսպանատան կից գործող Տիկնանց Յանձնախումբին:

Յարաբերաբար կարճ, սակայն օգտակար ու օրինակելի կեանքով ապրած ողբացեալին բարի յիշատակը պիտի մնայ մեր սրտերուն մէջ:

«Տ.»



ՅԱԿՈՔ ՓԻԱՆՏԱՐԵԱՆ ԿՐ ՄԵԾԱՐՈՒԻ ԸԲԸՄ-Ի «ՊԱՏՈՒՅ ԱՆՂԱՄ»-Ի ՏԻՏՂՈՍՈՎ

ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՅՈՒԹԻՆԸ «Պատուոյ Անդամ» հռչակած է տիար Յակոբ Փիանտարեանը իր երկար տարիներու նուիրեալ ծառայութեան համար:

«Պատուոյ Անդամ» –ի գնահատագիրին տուուչութիւնը տեղի ունեցած է Կիրակի 15 Մարտ 2009-ին, ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ Փաստօրէնայի Ալեք Մանուկեան Կեդրոնի Տիկնանց Յանձնախումբին Միջինքի առթիւ կազմակերպած ճաշկերոյթ– հանդիսութեան ընթացքին:

Ներկայ եղած են Հարաւային Գալիֆորնիոյ Շըրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պր. Պերճ Շահպազեանը, Շրջանակայինի նախկին ատենապետներ, որոնց պաշտօնավարութեան շրջանին մեծարեալը գործակցած էր անոնց որպէս անդամ, ապա՝ նաեւ որպէս ատենադպիր, Ալեք Մանուկեան Համալիրի Շինարարական Յանձնախումբի գանձապահ ու Փաստօրէնա Կլէնտէյլի վարչութեան երկարամեայ ատենապետ: Ներկայ եղած են նաեւ անդամներու եւ բարեկամներու հոծ բազմութիւն մը:

Հանդիսութեան ընթացքին ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Վարչութեան փոխ ատենապետ Պր. Հայկ Մարտիան, հանգամանօրէն ներկայացուցած է մեծարեալին ունեցած երկարամեայ ծառայութիւններն ու նուիրումները ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին, սկսած իր ծննդավայր Աղեքսանդրիայէն, Եգիպտոս: Տիար Յակոբ Փիանտարեան մինչեւ Գալիֆորնիա հաստատուիլը յաճախած էր Աղեքսանդրիոյ Պողոսեան Ազգային Վարժարանը եւ

ապա տեղույն Լիսէ Ֆրանսէի գիտութեանց բաժինը աւարտելէ յետոյ, իր մասնագիտութիւնը կատարած էր, նոյն հաստատութեան հողագործութեան յատուկ ինստիտուտին մէջ եւ զայն գերազանց աւարտած, ճարտարագետի կոչումին արժանանալով:

Ապա՝ Պր. Մարտիան շեշտը դրած էր մեծարեալին ազնիւ, անարատ ու անբասիր նկարագրին բարեմասնութիւններուն վրայ ու ընդհանուր խանդավառութեան մէջ բեմ հրաւիրած Պր. Յակոբ Փիանտարեանը, ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ Կեդրոնական Վարչութեան «Պատուոյ Անդամ»–ի գնահատական գիրը ստանալու, ձեռամբ Միութեան պատուակալ աւագ անդամներ՝ Պր. Գառնիկ Գարայեանի եւ Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պր. Պերճ Շահպազեանի:

Շնորհակալական իր ելոյթին մէջ, մեծարեալը ըսած է, «Այս մեծարանքին առիթով՝ ինծի շնորհուած պատիւը ես կը բաժնեմ միութենական իմ բոլոր գործակիցներու հետ, որոնք ինծի հետ անսակարկ նուիրումներով օժանդակեցին Հարաւային Գալիֆորնիոյ ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ Փաստօրէնայի վարչութեան կազմաւորման սկզբնական աշխատանքներուն»: Ապա, ան հակիրճ կերպով անդրադարձած է Բարեգործականի ուղիով իր կատարած ծառայութիւններուն:

Կը շնորհակարտէր Պր. Յակոբ Փիանտարեանը ու կը մաղթենք որ նոյնքան արգասաբեր ըլլայ նաեւ իր ապագայի գործունեութիւնը:

«Տ.»

ԸԲԸՄ-Ի ԵՒ ԸԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ ԴՐԱՄԱՏԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄ ԵՐԵՒԱՆԻ ՆՈՒՊԱՐԱՇԵՆ ԱՐՈՒԱՐՁԱՆԻՆ ՄԵՋ ԲԱՅՈՒՄ ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻ ՄԸ

Մարտ 25-ին Երեւանի Նուպարաշէն արուարձանին մէջ ՀԲԸՄ-ի եւ Համաշխարհային Դրամատան համագործակցութեամբ ամբողջացուած է բացումը կատարուած է մարզական եւ մշակութային կեդրոնի մը:

Բացման հանդիսութեան ընթացքին ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակեան ակնարկած է այն մասին թէ որքան անհաւատալի է տեսնել գեղեցիկ շէնքի մը բացումը այն արուարձանին մէջ որ առաջին անգամ հիմնուած է անցեալ դարու 30-ական թուականներուն Միութեան հիմնադիր Պողոս Նուպարի կողմէ եւ ցարդ կը կրէ իր անունը: Նախագահ Սեդրակեան ակնարկեց թէ ՀԲԸՄ-ը մասնակցելով շէնքին շինութեան, իր յարգանքը կը մատուցանէ Պողոս Նուպարին եւ անոր իտեալներուն:

Նուպարաշէնի Կեդրոնին շինութեան ծրագիրը սկսաւ 2005-ին, սակայն անոր իրականացումը տեղի ունեցաւ երբ ՀԲԸՄ-ը եւ Համաշխարհային Դրամատունը մասնակցեցան 85 միլիոն հայկական դրամով

(շուրջ 250,000 ամերիկեան տոլար), որուն կարիքը կար ծրագիրին վերջին հանգրուանը լրացնելու համար: Այդ գումարին 45% վճարուած էր Համաշխարհային Դրամատունէն, մինչ ՀԲԸՄ-ը հայթայթեց մնացեալ 55%:

Նուպարաշէնի համայնքին քաղաքապետ Միքայիլ Յովհաննիսեան խօսելով Պողոս Նուպարի կողմէ Նուպարաշէնի վայրին ընտրութեան, բացատրեց թէ այդ ընտրութիւնը պատահական չէր եւ ՀԲԸՄ-ի նախագահը այս վայրը ընտրած էր քանի որ ան խորհրդանշական կարեւորութիւն ունէր իբրեւ յարմարագոյն վայր մը ուրկէ կարելի է տեսնել թէ Արարատ եւ թէ Արագած լեռները՝ առաջինը որպէս հայ ծողովորդի հոգեկան խորհրդանշան եւ վերջինը որպէս այսօրուայ Հայաստանի ամենաբարձր լեռը: Կեդրոնի առաջին յարկը կը պարփակէ մարզասրահ մը, մինչ երկրորդ յարկը կը պարփակէ մշակութային ձեռնարկներու համար նախատեսուած սրահ մը:



ԳԱՀԻՐԵԻ ՀԲԸՄ-Ի ԱՆՂԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ



2007-2008 տարեշրջանի շրջանաւարտ վարչութիւնը (կը բացակայի Տիար Օսնիկ Կարիպեան - ճամբորդած)

Գահիրեի ՀԲԸՄ-ի անդամական ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Զորեքշաբթի 29 Ապրիլ 2009-ի երեկոյեան ժամը 8:00-ին Միութեան կեդրոնին մէջ, հելիոպոլիս:

Ընդհանուր ժողովը քննարկելէ ետք օրակարգի հարցերը, համապատասխան որոշումներ առաւ, ապա ձեռնարկեց վարչական ընտրութեան:

Շրջանաւարտ վարչութիւնը իր վեցամեայ շրջանը, (երեք անգամ երկամեայ շրջան) աւարտած ըլլալով, այս տարի ամբողջական ընտրութիւններ կատարուեցան:

Վարչութեան ինը տեղերուն համար ներկայացած էին ինը թեկնածուներ:

Թեկնածուներուն մէջ առաջին անգամ ըլլալով կը ներկայանար տիար Գեորգ Աւանեան, որ ընտրուելու պարագային նախատեսուած էր որ ստանձնէ գանձապահի պաշտօնը, զոր նախապէս 17 տարի անընդմէջ խղճմտօրէն եւ բճախնդրօրէն կատարած էր տիար Միսաք Չէչճէնեան, որ այժմ կը փափաքէր քաշուիլ այդ պաշտօնէն: Տիար Չէչճէնեան բոլորին խնդրանքին ընդառաջելով ընդունած էր իր թեկնածութիւնը դնել վարչութեան անդամակցութեան որպէսզի ընտրուելու պարագային իր փորձառութեամբ օժանդակէ վարչութեան:

Գահիրեի ՀԲԸՄ-ի պատուոյ ատենապետ տիար Պերճ Թերզեան ըստ առաջնոյն պիտի շարունակէ իր գործօն մասնակցութիւնը բերել տրոնտիր վարչութեան գործունեութեան եւ ներկայ գտնուիլ վարչութեան նիստերուն:

Տեղին է նշել, որ շրջանաւարտ վարչութեան անդամներէն տիար Կարէն Բեհիանեան իր թեկնածութիւնը քաշեց վարչութեան անդամակցութենէն, որպէս ինը տեղերու համար, մասն միայն ինը թեկնածուներ:

Նոյնպէս օր. Սոնա Մարգարեան, որ երկարամեայ վարչական անդամ եւ օժանդակ եղած է, փափաքեցաւ քաշուիլ վարչութենէն:

Այսպիսով վարչութեան անդամակցութեան ներկայացող ինը թեկնածուները ի չգոյէ ուրիշներու, բոլորն ալ ընտրուեցան:

Նորընտիր վարչութիւնը իր դիւանը կազմեց հետեւեալ ձեւով.

Տնօրէն Վիգէն Ծիգմեճեան	Ատենապետ	Տեարք Օսնիկ Կարիպեան	Օժանդակ
Տեարք Օսնիկ Պըրճեանեան	Փոխ Ատենապետ	Կարի Բեհեանեան	Օժանդակ
Մարտիրոս Պալաեան	Ատենադպիր	Յակոբ Գարակեօզեան	Օժանդակ
Գեորգ Աւանեան	Գանձապահ	Ռուբէն Թերզիպաշեան	Օժանդակ
Տեարք Նորայր Տօպլէթեան	Խորհրդական	Օրբ. Ռուբինա Ասլանեան	Օժանդակ
Միսաք Չէչճէնեան	Խորհրդական	Արփի Խաչերեան	Օժանդակ
Զրիստափոյր Միքայէլեան	Խորհրդական	Տնօրէն Անի Օհաննեսեան	Օժանդակ
Պերճ Բէչճէնեան	Խորհրդական		
Տնօրէն Ծորճ Սիմոնեան	Խորհրդական		

Նկատելի է որ վարչութեան կազմին մէջ եղած փոփոխութենէն զատ, օժանդակներու կազմին մէջ եւս փոփոխութիւն եղած է տիար Ռուբէն Թերզիպաշեանի վարչութեան օժանդակ անդամ նշանակուելով:

Գահիրեի ՀԲԸՄ-ի վարչութեան նոր կազմին յաջող գործունեութիւն կը մաղթենք:



ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ

ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՄ

2009-ի Չափազանց տոնական օրերուն պարգեւած հոգեւոր գոհունակութեան զուգահեռ, եգիպտահայ գաղութը առիթը ունեցաւ ներկայ գտնուելու Յելիոպոլսոյ ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի կազմակերպութեամբ կայացած մարզական բացառիկ ծեռնարկի մը:

Հոկտեմբեր 2008-ին, ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի նոր կեդրոն փոխադրութեան 50-ամեակի տոնակատարութեան ժամանակ, Հայկէսը հրաւիրուած երկու մարզիկներու ներկայութիւնն ու խաղցուած մրցումները այնքան խանդավառութիւն ստեղծած էին որ ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի վարչութիւնը յանդուրձան գաղափարը ունեցած էր Լիբանանի Հայկազեան Համալսարանի* պատրաստած պատրաստած ֆուտպոլի տղոց խումբերը հիւրասիրելու եւ նոյն ծախսերը մրցաշարը մը կազմակերպելու Ուրբաթ 10, Շաբաթ 11 եւ Կիրակի 12 Ապրիլ 2009-ին:

Մինչ այս շրջանին, ուրիշ տարիներ, պատրաստած ու ֆուտպոլի փորձերը ժամանակակից կերպով կը նուազէին եւ կամ նոյնիսկ կը դադարէին քննութիւններու եւ մօտակայ մրցաշարքի չգոյութեան պատճառներով, այս տարի ընդհանրապէս ամեն խումբերը նախապատուութիւն տուած էին փորձերուն եւ ակումբը միշտ եռուզեռի մէջ էր:

Հիւզաբքի 10 Հոկտեմբերի գիշերուայ 9:30-ին Պէյրութէն հասաւ Հայկազեան Համալսարանի 31 հոգիներ խումբը բաղկացած՝ 10 մարզիկուհիներէ, 19 մարզիկէ, մարզիչէն ու պատասխանատու Պր. Սահակ Պիտիւնեանէ: Խումբը դիմաւորելու համար օդակայան գացած էին ՀԱՐՑ-ի Գահիրէի Մասնաճիւղի ատենապետ եւ Յելիոպոլսոյ ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի վարչական անդամ տոքթ. Վիգէն Ծիգմեճեան, նոյն վարչութեան անդամ տիար Ժիրայր Յակոբեան եւ տիկինը Սօսի, որ ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի պատրաստած ֆուտպոլի աղջիկներու խումբին պատասխանատուն է, նաեւ մարզիկներ Արմէն Վարժապետեան եւ Սիմոն Տեփոյեան:

Խումբը Հորիզոն պանդոկին մուտքին դիմաւորուեցաւ Յելիոպոլսոյ ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի ատենապետ տոքթ. Կարո Աբգարեանի կողմէ:

Ուրբաթ առաւօտ կանուխ բուրգերու այցելութեամբ սկսաւ տոքթ. Վիգէնի ծրագրած յայտագրին գործադրութիւնը: Խումբին կ'ընկերակցէին ակումբի երիտասարդներէն Արմէնը, Սիմոնը, Շահանը, Գեղամը, Սարօն եւ Արամը: Ուրբաթ առաւօտեան հանդարտ երթելով հաճելի պտոյտ մը եղաւ Յելիոպոլսոյ Կիզէ հասկիլը: Կեսօրին խումբը ճաշակեց Andrea-ի հոջակաւոր աղցաններն ու խորոված հաւը:

Կեսօրէ ետք սկսաւ մրցաշարքը, որ կը վայելէր բարձր հովանաւորութիւնը Եգիպտոսի Թեմի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանի եւ նախագահութիւնը Գահիրէի Պատկ. Թեմական ժողովի ատենապետ Տէր եւ Տիկին Անդրանիկ Մետրոպոլիտանի:

Առաջին մրցումը Հայկազեանի եւ Աղեքսանդրիոյ

Պոլոսեան ** Վարժարանի ֆուտպոլի խումբերուն միջեւ էր: Բաւական հետաքրքրական եւ հաւասարակշռուած խաղէ մը ետք արդիւնքը եղաւ 1-0-ի նպաստ Հայկազեանի խումբին:

Ժ.ը. 8:30-ին սկսաւ պատրաստած մրցումը Հայկազեանի եւ Աղեքսանդրիոյ ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի խումբերուն միջեւ: Տարիքի եւ կարողութիւններու անհասարակշռութիւն մը կար խումբերուն միջեւ եւ արդիւնքի մեծ տարբերութիւն մը: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ Հայկազեանին 51-28 արդիւնքով: Յելիոպոլսոյ ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի վարչութիւնը ընթրիքով մը հիւրասիրեց հիւր մարզիկները:

Շաբաթ առաւօտեան ժ.ը 9:00-ին օթօպիւսը շարժեցաւ դէպի Գահիրէի Փարաւոնական թանգարանը: Խումբին կ'ընկերակցէին Արմէնը, Գեղամը եւ Յակոբը: Կեսօրին ֆուտպոլի մրցում մը խաղացին Յելիոպոլսոյ ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի եւ Աղեքսանդրիոյ Պոլոսեան վարժարանի խումբերը, որ աւարտեցաւ ի նպաստ ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի 6-1: Այդ օրուայ ճաշը եղաւ ակումբին մէջ: Տրուած ըլլալով որ նոյն գիշերը պարահանդէս կար Novotel-ի մէջ, երեկոյեան մէկ մրցում ծրագրուած էր երկու ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ներուն միջեւ: Հանդիսատեսներու թիւը զգալիօրէն սակաւ էր, մանաւանդ իգական սեռինը, որոնք պարահանդէսին կը պատրաստուէին: Ոչ հետաքրքրական մրցումը աւարտեցաւ ի նպաստ Գահիրէի խումբին բաւական մեծ տարբերութեամբ:

Յելիոպոլսոյ ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի վարչական անդամուհի եւ Տիկին Աննա Յանձախումբի ժրաջան ատենապետուհի տիկին Գոհար Առաքելեան արդէն ժամեր առաջ կը գտնուէր Novotel հիւրանոց, անձամբ հսկելու պարահանդէսին բոլոր մանրամասնութիւններուն: Ժամը 10:00-էն սկսեալ կամաց-կամաց ակումբի անդամներն ու համակիրները, մարզիկներն ու հիւրերը սկսան լեցնել շքեղօրէն զարդարուած պարահանդէսի սրահը, ուր DJ Արմէն Վարժապետեան կը հնչեցնէր ծանօթ երգեր ու մեղեդիներ: Ուրախալի էր նկատել որ 160 ներկաներէն 100-ը երիտասարդներ ու պատանիներ էին:



ՀԱՐՑ ԵՎ ԿՐԻՄ-ի եւ Հայկազեան Համալսարանի պատասխանատուները յուշանուէրներ կը փոխանակեն



Պարահանդեսին ներկայ խումբ մը երիտասարդներ

Շուտով պարահարթակը լեցունեցաւ զոյգերով եւ երբ շուրջպարի եղանակները հնչեցին, երիտասարդներուն տրամադրուած սեղանները բոլորովին պարպուեցան: Ընդհանրապէս վիճակահանութիւնէն ետք պարահանդէս մը աւարտած կը նկատուի, այդ ճիշդ էր տարեցներուն համար որոնք խումբ-խումբ սկսան հրաժեշտ տալ. սակայն պարահարթակը բերնէ բերան լեցուն մսաց երիտասարդներով մինչեւ առաւօտեան առաջին ժամերը: Կը շնորհաւորենք ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ի վարչութիւնը այս տեսակ յաջող պարահանդէս մը կազմակերպելուն համար:

Կիրակի առաւօտ հիւր խումբին անդամները ուղղուեցան դէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճար Ս.Չատիկի արարողութեան ներկայ գտնուելու: Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Կոկանեան Սրահի վարչութիւնը կ'եսորուայ ճաշի սպասարկութիւն կազմակերպած էր ակումբին դալարագեղ պարտեզին մէջ: Հայկազեանի խումբին համար լաւ պատեհութիւն էր հայկական տարբեր ակումբ մը այցելելը: Ծաշէն ետք խումբը պանդոկ գնաց քիչ մը հանգիստ ընելու եւ պատրաստուելու գիշերուայ աւարտական մրցումներուն:

Ֆութպոլի աւարտականը սկսաւ կ.ե. 6:30-ին Հելիոպոլսոյ ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ի եւ Հայկազեանի խումբերուն միջեւ: Հակառակ որ ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ի ֆութպոլի խումբը չենք կրնար «կանոնաւոր» խումբ նկատել, քանի որ գրեթէ փորձ չեն ըներ եւ կը հաւաքուին միայն մրցաշարքէ մը 2 շաբաթ առաջ, սակայն զարմանալիօրէն միշտ ալ յաղթական դուրս կու գան: Այս անգամ եւս, հետաքրքրական եւ հաւասարակշռուած մրցումէ մը ետք յաղթեցին 2-0 արդիւնքով ու տիրացան ՀԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիւղի ատենապետ Տէր եւ Տիկին Սարգիս Վարձպետեանի նուիրած բաժակին: Կը շնորհաւորենք խումբին պատասխանատու Պր. Ռուբէն Սիմոնեանը եւ մարզիչ քաբթէն Տօրրին:

Օրուան երկրորդ մրցումը Հելիոպոլսոյ ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ի եւ Հայկազեանի աղջիկներուն միջեւ էր: Հակառակ որ կամքէ անկախ պատճառներով, խումբէն կը բացակայէին Մարալ եւ Նայիրի Յակոբեանները, աղջիկները խաղացին ինքնավստահ ու խիզախ, ցուցաբերեցին բարձր մակարդակ, կարողա-

ցան 54-46 արդիւնքով յաղթել Հայկազեանի զօրաւոր խումբին ու տիրանալ Գահիրէի Պատկ. Բաղաքական ժողովի ատենապետ տէր եւ տիկին Օսնիկ Պըլըքտանեանի նուիրած բաժակին: Գնահատելի է խումբի պատասխանատուներ Տէր եւ Տիկին Ժիրայր եւ Սօսի Յակոբեաններուն ու խումբին աւելի քան 12 տարուայ մարզիչ քաբթէն Չաքարէյա Մուհիլ Էստինի կատարած աշխատանքը:

Ժողովուրդը անհամբեր կը սպասէր Հելիոպոլսոյ ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ի եւ Հայկազեանի տղոց միջեւ կայանալիք աւարտական մրցումին, որ առաջին վայրկեանէն իսկ յայտնի էր թէ հետաքրքրական եւ անակնկալ վերջաւորութիւն մը պիտի ունենար, քանի որ երկու խումբերն ալ գրեթէ հաւասար մակարդակի էին: Հակառակ որ երեք կիսախաղերուն ՅԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ի տղաքը յաղթական էին, սակայն չորրորդ կիսախաղին բախտը փոխուեցաւ եւ բուն պայքարէ ետք մրցումը աւարտեցաւ ի նպաստ Հայկազեանին 84-81 արդիւնքով: Հիւրերը ստացան տէր եւ տիկին Նուպար Սիմոնեանի նուիրած բաժակը: Այս մակարդակի ու որակի մրցում մը խաղալը յաղթանակի նման գոհունակութիւն կը պատճառէր ունէր խումբի: Վարձքը կատար խումբին պատասխանատու եւ նախկին խմբապետ պր. Յակոբ Գարակեօզեանին եւ մարզիչ քաբթէն Ալաա Չահրանին: Այսպիսով մրցաշարքը հասած էր իր աւարտին:



ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ի պասքէթ պոլի խումբը

Երկուշաբթի օր Հայկազեանի խումբերը մրցեցան Գահիրէի Ամերիկեան Համալսարանի խումբերուն հետ համալսարանի նոր համալիրին՝ «Նոր Գահիրէ»-ի մէջ: Տղոց ֆութպոլի եւ պասքէթպոլի խումբերը յաղթական հանդիսացան:

Երեքշաբթի կ'եսորին աւարտեցաւ Հայկազեանի զբօսապտոյտը Գահիրէի մէջ: Պանդոկին սպասման սրահին մէջ խումբը կազմ պատրաստ էր: Տոքթ. Վիգէն Ճիգմեճեան եկած էր հրաժեշտ տալու իրենց, իսկ տէր եւ տիկ. Ժիրայր եւ Սօսի Յակոբեան ընկերակցեցան խումբին մինչեւ օդակայան:

Մրցումներուն ժամանակ առիթը ունեցայ զրուցելու խումբին պատասխանատու Պր. Սահակ Պիտինեանի հետ, որ խորին շնորհակալութիւն յայտնեց Գահիրէի ՀԲԸՄ-ի եւ Հելիոպոլսոյ ՅԱԸՄ ՆՈՒ-



Հայկազեան Համալսարանի Պասքեթ պոլի տղոց յաղթանակի ուրախությունը

ՊԱՐ-ի վարչություններուն, որոնք հիւրասիրած էին զիրենք եւ այս տեսակ յաջող մրցաշարք մը կազմակերպած: Երբ հարցուցի, թէ ասկէ առաջ ու՞ր ճամբորդած են համալսարանի խումբերը, ըսաւ «2004-ին առաջին անգամ ըլլալով տղոց պասքեթպոլի խումբը Ֆրանսա «Tournoi des cinq ballons» մրցաշարքին մասնակցած է: Նոյն մրցաշարքին մասնակցած է նաեւ 2006-ին: Կրկին 2006-ին տղոց ֆութպոլի խումբը Barcelona գացած է»:

Միթե՞ Լիբանանի մէջ ալ ճամբորդութեան պարագային նախապատուութիւնը տղոց խումբերուն կը տրուի հարցիս, ժպտեցաւ ու ըսաւ, «Ասիկա աղջիկներու խումբին առաջին ճամբորդութիւնն է, պարզապէս որովհետեւ միայն լաւագոյն խումբերն են որոնք դուրս կը դրկենք»: Պր. Սահակ յայտնեց որ հակառակ որ վստահ էին որ գոհ պիտի մնային իրենց այս ճամբորդութիւնէն, սակայն իրենց ակընկալածէն շատ աւելի գտան: «Ասիկա մեր լաւագոյն ճամբորդութիւնն է» ըսաւ ան. «նաեւ մեզի համար

շատ լաւ մարզական փորձառութիւններ էին այս մրցումները, քանի որ ուժերը բաւական հաւասար էին» աւելցուց ան: Ըստ Հայկազեանի օրէնքին, այն ուսանողը որուն միջինը 70% նուազ ըլլայ իրաւունք չունենար ճամբորդելու նոյնիսկ եթէ լաւագոյն խաղացող մը ըլլայ:

«Իսկապէս որ շքեղ ու լայնատարած ակումբ է ձեր ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ը» ըսաւ Սահակ «Հազուադէպ է գտնել այս որակի հայկական ակումբ մը սփիւռքի մէջ» աւելցուց ան:

Գովելի են Հելիոպոլսոյ ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ի եւ իրեն միշտ նեցուկ կազնող Գահիրէի ՀԲԸՄ-ի ճիգերը արտասահմանէն յաճախ երկսեռ խումբեր հրաւիրելու եւ առիթ տալու, մարզականի միջոցաւ, կամուրջներ հաստատելու սփիւռքի երիտասարդներուն միջեւ: Վարձքը կատար բոլորին:

Սօսի Ներսէտեան/ Յակոբեան

* Հայկազեան համալսարանը ոչ միայն Լիբանանի այլեւ միջին Արեւելքի միակ հայկական համալսարանն է ուր հակառակ որ ուսուցման լեզուն Անգլերէնն է, սակայն Հայերէն լեզուն ու պատմութիւնը պարտադիր նիւթեր են հայ աշակերտներուն համար: Ան անուանուած է մեծ դաստիարակ տոբթ. Արմենակ Հայկազեանի անունով, որ 1912-ին Միացեալ Նահանգներու Yale համալսարանէն տոբթորայի տիտղոսը ստանալէ ետք, կը վերադառնայ իր ծննդավայրը Թուրքիա, ուսում ջամբելու հայ գաղութի զաւակներուն: 1915-ի ցեղասպանութեան ժամանակ այլ հայ մտաւորականներու կարգին ան ալ կը ձերբակալուի, կը քշուի Սուրիոյ անապատները եւ կը վախճանի 1921-ին, Խարբերդի բանտը չհասած: Տոբթ. Հայկազեանի ազգականներն ու աշակերտները բնաւ չեն մոռցած մեծ դաստիարակին երազը «ուսում ու զարգացում ջամբել հայորդիներուն» եւ շնորհիւ իրեն ազգական Մեխակեան ընտանիքին ջրած նուիրատուութեան եւ Պր. Ստեփան Փիլիպոսեանի աջակցութեան, Հայկազեան Զոյլճի հիմնաքարը դրուեցաւ Լիբանանի մէջ 1955-ին: 1996-էն սկսեալ Լիբանանի Մշակոյթի եւ Բարձրագոյն Ուսման նախարարութեան հրամանով Հայկազեանը կը ճանչցուի որպէս համալսարան: Այժմ համալսարանը ունի 800 ուսանող եւ մօտաւորապէս 105 դասախօս եւ պաշտօնեայ: Համալսարանը կ'ընդունի երկրորդական վարժարան աւարտած աշակերտներ առանց ցեղային, ազգային կամ կրօնական խտրութեան: www.haigazian.edu.lb

** Աղէքսանդրիոյ Պօղոսեան Վարժարանի նախկին աշակերտներէն խումբ մը, տարի մը առաջ, գաղափարը ունեցած է ֆութպոլի փորձեր սկսելու վարժարանին բակին մէջ: Կամաց-կամաց 16-40 տարեկան խաղացողներուն թիւը աւելցած է հասնելով 27-ի եւ հարկ եղած բաժնէլ գանտը 3 խումբերու: Աղէքսանդրիոյ Ազգ. Իշխանութեան արտօնութեամբ ու աջակցութեամբ, բակը իսկական ֆութպոլի դաշտի վերածուեցաւ եւ 27 Մարտ 2009-ին խումբը օրինաւոր ձեւ ստանալով կոչուեցաւ Պօղոսեան Վարժարանի խումբ: Հակառակ որ տակաւին մարզիչ չունին, սակայն անձնական ճիգերով կազմուած գովելի խումբեր ծնունդ առած են: Հելիոպոլսոյ ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐ-ի մրցաշարքին մասնակցիլը խումբին առաջին մրցումն էր հանրութեան առջեւ: (Տեղեկութիւնը ստացուած է Պր. Հրանդ Վարձպետեանէ)



ՀՄԸՍ ՆՈՒՊԱՐ

ՊՏՈՅՏ ԴԵՊԻ ԻՍՄԱԽԼԻԱ

6 Փետրուար 2009

Գահիրեի ՀՄԸՍ ՆՈՒՊԱՐ-ը կիսամեայ արձակուրդի առիթը օգտագործեց եւ Ուրբաթ 6 Փետրուարին պտոյտ մը կազմակերպեց դէպի Իսմաիլիա քաղաքը :Պտոյտի 47 մասնակիցները զուարթ օր մը անցուցին «Մերքիւր Ֆորսան Այլընտ» գեղեցիկ պանդոկին մէջ «Սուէզի Ջրանցք»-ի Թիմասի Լիճի ափին: Անոնք զրուցեցին, վայելեցին համեղ ուտելիքները, հաճելի միջավայրը եւ Թիմասի Լիճին երազային տեսարանները: Կարծես թէ մեր հայրենակիցները իրենց հայրենի Սեւանայ լիճին հանդէպ ունեցած կարօտը յագեցուցին այդ օրը:



ԳԱՇԻՐԵԻ ՀՄԸՍ ՆՈՒՊԱՐԸ ԿԸ ՇԻՐԱՍԻՐԷ «ԲԱՐԻ ՀՈՎԻԻ» ՄԱՆԿԱՏԱՆ ՓՈՔՐԻԿՆԵՐԸ

10 Փետրուար 2009

Գահիրեի ՀՄԸՍ ՆՈՒՊԱՐ-ի վարչութիւնը «Ալ Բաի Ալ Սալէի»՝ (Բարի Հովիւ) մանկատան փոքրիկները հրաւիրած էր օր մը անցնելու մարզարանէն ներս: Մարզարանին պարտեզին մէջ, գարնան մեղմ արեւին տակ, մանուկները եւ իրենց ղեկավարները հաճելի օր մը անցուցին: Անոնք խաղացին պարտեզին մէջ գտնուող մանուկներու յատուկ խաղավայրին մէջ տեղադրուած օրօրոցներով, սահնակներով եւ տնակներով: Անոնք հեծանիւ ստան, պարեցին եւ ուրախացան: Առաւել, անոնք դիտեցին աճապարներու խումբի մը կողմէ ներկայացուած ծրագիր մը եւ ճաշակեցին Macdonald-էն բերուած ուտելիքներ:

Մանուկներով զբաղեցան սրահին տիկիները: Անոնց հետ խաղացին ՀՄԸՍ-ի մարզիկներէն իրենց տարեկիցները: Հայ Զրիստոնեայ Ընտանիքի պատասխանատուներ նաեւ ներկայ գտնուեցան այս հիւրասիրութեան: Ի վերջոյ «Ալ Բաի Ալ Սալէի»-ի



մանուկները շատ լաւ տրամադրութեամբ ժպտաղէմ մեկնեցան մարզարանէն:

Արփի Խաչերեան

ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ԱՅԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Թեքնիք պատճառներով սոյն նկարը կարելի չէր եղած հրատարակել «Տեղեկատու»-ի նախորդ թիւին մէջ:

Նկարին մէջ՝ Զաթրին Իրատեան կը ստանայ իր գերազանցիկի վկայագիրը եւ մրցանակը Տիար Զրիստափոր Միքայէլեանէ:





ՏԻՂԱՆ ԶՈՒԽԱՃԵԱՆԻ «ԿԱՐԻՆԵ»Ը ԿՐ ՓԱՌԱԴՐՈՒԻ «ՊՈՒՖ ՏԻՆ ՆՕՐ»-Ի (Les BOUFFES DU NORD) ԲԵՄԻՆ ԿՐԱՅ:

Տիգրան Զուխաճեանի վերստեղծուած «Կարինե» օփերէթի առաջին արարին ներկայացումը՝ բեմադրութեամբ Ժիրայր Բաբազեանի տեղի ունեցած է 21 Յունուարին Փարիզի մէջ, «Պուֆ տիւ Նօր»-ի բեմին վրայ: Վեց մենակատարներ, տասներկու երգիչներ եւ երեք երաժիշտներ ներկայացուցած են մեծ երգահանին այս գործը՝ Ֆրանսերէն մեկնաբանութեամբ:

Ժիրայր Բաբազեանի ունեցած արեւմտեանի եւ միանգամայն արեւելեանի տեսութիւնն է որ մղած է զինք ստեղծելու այս օփերէթը՝ Ֆրանսայի մէջ:

«Պուֆ տիւ Նօր» թատրոնը գրուած է խումբը եւ Իրինա Պրուքի դրական հայեացքը: Ժիրայր Բաբազեան կը գտնէ, թէ Պուֆ տիւ Նօր-ի գողտրիկ, արկղանման բեմահարթակը լաւագոյն վայրն է նման պարզութեանը արեւելեան ներկայացումի մը համար: Ճարտար բեմակալացումը, երաժշտութեան գործիքաւորման եւ պարերուն ինքնատպութիւնն ու աշխուժութիւնը, մեկնաբանողներուն բանաստեղծականութիւնն ու հմայքը, ծանօթ արուեստագետներու կողմէ իրագործուած զգեստաւորումը եւ Իրինա Պրուքի խումբին դերակատարներուն մասնակցութիւնը նպաստած են ներկայացման յա-

ջողութեան:

Երկու հարիւրէն աւելի հանդիսատեսներ ներկայ եղած են ներկայացումին, որոնցմէ հայերուն թիւը հարիւրին տասէն ալ նուազ էր...: Այնպէս կ'երեւի թէ այս բաւական յառաջացած ծրագրին իրագործման համար հայութեան կողմէ ոչ մէկ նիւթական օժանդակութիւն եղած է: Ժիրայր Բաբազեան եւ իր օգնական բեմադրիչը՝ Alexandre Martin Varroy կ'աշխատին սիրայօժար եւ նուիրումով: Նոյնն է պարագան քսաներկու արուեստագետներուն որոնք տասամսուան մէջ երեք հազար ժամ զոհած են այս գործին կազմակերպման եւ կատարելագործման համար:

«Կարինե»-ի ներկայացումը ուշադրութիւնը գրուած է Փարիզի եւ այլ քաղաքներու մշակութային հաստատութիւններուն:

Շնորհաւորելի է Ժիրայր Բաբազեանի տարած այս հիանալի աշխատանքը: Կը մաղթենք որ ան յաջողութեամբ աւարտէ յաջորդ երկու արարները եւս:

Nouvelles d'Armenie Magazine Թիւ 150 Մարտ 2009
Թրգմ. Անայիս Ճիգմեճեան

ՐԱՅԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿՐ ՄՏԱՆՁՆԵ ՓԱՐԻՉԻ ՄԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ ԽՄԲԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Նախկին եգիպտահայ երաժիշտ Կարպիս Ափրիկեան, Ուրբաթ 13 Մարտին, Փարիզի «Saint Vincent de Paul» եկեղեցիին մէջ տուած է իր հրաժեշտի համերգը: Աւելի քան 50 տարի ղեկավարելէ ետք Փարիզի «Սիփան-Կոմիտաս» երգչախումբը, ան այս համերգին ընթացքին խմբավարութեան ջահը փոխանցած է Զայկ Սարգիսեանին, անոր յանձնելով խմբավարութեան իր ճպոտը:

Մեր գաղութին քաջ ծանօթ Զայկ Սարգիսեան 1983-ին Գահիրէի ԶԲԸՄ-ի «Կռունկ» երգչախումբին խմբավարն էր եւ ապա՝ Աղեքսանդրիոյ մէջ, նոյն Միութեան հիմնած «Գուսան» երգչախումբին: Այս երկու խումբերուն ելոյթները

առանձին թէ միասնաբար, մեծ ոգեւորութիւն ստեղծած էին երկու գաղութներուն մէջ եւ մանաւանդ երիտասարդներուն մօտ, որոնք շուտով ընկալեցին հայկական երաժշտութեան համն ու հոտը:

1992-ին Զայկ Սարգիսեան կը փոխադրուէր Փարիզ, ուր կը ստանձնէր տեղւոյն ԶԲԸՄ-ի երգչախումբին խմբավարութիւնը եւ ապա՝ Նաեւ Դպտոցասէր Վարժարանի երգչախումբին ղեկավարութիւնը:

Զայկ Սարգիսեանին վստահուած այս նոր աշխատանքին առթիւ կը շնորհաւորենք զինք եւ կը մաղթենք որ հայ երգը իր «ճպոտ»-ին թափահարումով նուաճէ նոր բարձրութիւններ:



ԺԻՐԱՅՐ ԲԱԲԱՁԵԱՆ՝ ԹԱՏՐՈՆԻ ՍԻՐԱՇԱՐԸ

Ո՞վ է Ժիրայր Բաբազեանը: Առաջին իսկ ակնարկով, ան կը թուի ըլլալ արդար, վեհանձն անձ մը: Ծնած Գահիրէ՝ Եգիպտոս, իր իսկ խօսքով «Բուրգերուն առջեւ»։ Ետոյ կիպրացի պատանի, Ժիրայր Բաբազեան երիտասարդ կը դառնայ Երեւանի մէջ, ուր հիւնգ տարիներ շարունակ կը յաճախէ գեղարուեստա – թատերական ինստիտուտը: Չափահաս տարիքին՝ կը մեկնի Լոնտոն ուր կը մնայ երկու տարի. ապա կ'անցնի Լոս- Անճելոս՝ Միացեալ Նահանգներ եւ այնտեղ կը սկսի իրապէս անուանի դառնալ: «Յոն մնացած եմ տասներկու տարի, շատ աշխատած եմ իբր դերասան, մասնաւորաբար դերեր ստանձնելով հեռուստատեսութեան թատերական շարունակական շարքերուն մէջ» կ'ըսէ ան: Յետոյ Ժիրայր կը թողու Լոնտոնի եւ կը հաստատուի Փարիզ: Իր միակ ափսոսանքը եղած է լքել Լոս-Անճելոսի ԶԲԸՄ-ի գեղարուեստական ղեկավարի իր պաշտօնը: «Իմ երազս կ'իրագործէի» կը յարէ ան «Ստեղծելով ապա ղեկավարելով թատերական ընկերութիւն մը՝ կազմուած սփիւռքի հայ արուեստասեր երիտասարդներէ: Չորս տարի տեւեց: Յիտուն հոգիի չափ էինք, որոնցմէ՝ Սիմոն Աբգարեանը...»:

«Պետք էր կոյր ըլլալ չտեսնելու համար անոր բացառիկ տաղանդը» կ'ըսէ Ժիրայր. «Կեանքիս մէջ առաջին եւ վերջին անգամ ըլլալով, քաջութիւնը ունեցած եմ մէկու մը ըսելու.– Գրոհէ՛, նետուէ՛: Օր մը «Թէաթրը տիւ Սօլէյ»-ի (Theatre du Soleil) թատերախումբը եկած էր Լոս-Անճելոս. այնպէս մը կարգադրեցի, որ իմ խումբիս անդամները կարենան ներկայ գտնուիլ անոր ներկայացումներուն: Սիմոն շլացած էր: Զանի մը ամիս վերջ ան մաս կը կազմէր այդ թատերախումբին: Սիմոնին պատմութիւնը՝ Սոխրանուշին նման է ...»:

Ամերիկայի իր վերջին տարիներուն, Ժիրայր կը յայտնուի նաեւ որպէս բեմադրիչ: Իր «Անոյշ» օփերան, քննադատներու կողմէ նկատուած է Միչիկանի (Michigan) օփերա թատրոնին իբրեւ եղանակի լաւագոյն արտադրութիւնը: Ինքնավստահ՝ Ժիրայր կ'արձանագրէ իր լաւագոյն յաջողութիւններէն մէկը՝ «Երգ Արարատի» (Chant d'Ararat) գործով զոր տասնմէկ տարիներ շարունակ կը ներկայացնէ ամբողջ աշխարհի մէջ, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով:

Այս թատերախաղին շնորհիւ, անոր հեղինակներն ու դերակատարները՝ (Ժիրայր եւ Նո-

րա Արմանի), Լոս-Անճելոսի մէջ, 1987-ին եւ 1988-ին արժանացած են «Քննադատներու մրցանակ»-ին:

«Այս յաջողութիւնը մեզի որոշ համբաւ մը ապահովեց» կ'ըսէ Ժիրայր. «Եւ երբ անուանի արուեստագիտուի Իրինա Պրուք (Irina Brook) որոշեց բեմադրել իր նշանաւոր «Անբան-անասունը լուսնին վրայ» (La Bete sur la lune) գործը, ան կը փնտռէր «հայ մշակոյթի մասնագետներ»: Իրեն յուշեցին իմ անունս: Հրաշալի հանդիպում մը եղաւ: Տակաւին այսօր, մեծ հաճոյք է աշխատիլ իր ղեկավարութեան տակ: Ամէն մէկ փորձ խրախճանք մըն է եւ նաեւ ստեղծագործութեան եւ հնարագործութեան դաս մը: Ես շատ հպարտ եմ որ յաջողեցայ Հայաստան հրաւիրել տալ Իրինայի թատերախումբը: Ան ելոյթ պիտի ունենայ այնտեղ Սեպտեմբեր 2009-ին»:

Այսօր, գերաշխոյժ Ժիրայրը կանգ չ'առնէր: Ան միեւնոյն ժամանակ զանազան թատերախաղերու մէջ է, կը շրջի Իրինա Պրուքի խումբին հետ եւ վերջապէս մեծ աշխոյժութեամբ լծուած է «Կարինէ»-ի բեմադրութեան: «Կարինէ»-ն երաժշտական-թատերական կատակերգութիւն մըն է զոր ինք վերածած է Ֆրանսերէնի եւ համադրած՝ երգային, պարային եւ խօսակցական դրուագներու յաջորդականութեամբ:

Այս օփերէթին համաշխարհային ամբողջական առաջին ներկայացումը տեղի պիտի ունենայ 9 Մայիս 2010-ին «Սէն Մօր» (Saint Maur) թատրոնին մէջ:

«Այս կատակերգական օփերէթով. կ'ուզեմ ցոյց տալ որ հայերուն հետ ալ կարելի է զուարճանալ» կ'ըսէ Ժիրայր, ու ապա կը յարէ. «Երաժշտութիւնը 1874-էն է, առաջին ջարդերէն բաւական առաջ. այն ատեն կեանքը հեշտ էր, շողշողուն: Առաջին փորձերը քաջալերական են: Երաժիշտներուն, դերասաններուն մեծամասնութիւնը հայ չեն: Իմ ամբողջ կեանքիս նպատակը եղած է հայ բանաստեղծութիւնն ու երաժշտութիւնը ներկայացնել ոչ-հայ դերասաններով, ոչ-հայ հասարակութեան մը առջեւ: Ասիկա ինձի համար մեր պատգամը փոխանցելու լաւագոյն միջոցն է ...»:

Nouvelles d'Armenie Magazine Թիւ 151 Ապրիլ 2009
Թրգմ. Անայիս Ճիգմեճեան

